



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LTn
3
v

1999 11 11

ՎԱՂԱՐՉԱԳԱՏ

ՔԱՂԱՔԱՄԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՄԻ

ԱՅՐԱՐԱՏՆԸ ՆԱՀԱՆԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՆ ԱՐԻՆ ԱՐԲԵՊԻՍՎՈՊՈՍ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ի ՎԱՂԱՐՉԱԳԱՏ

Ի ՅՈՒՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂՎԻՅԻ ԻՋՄԻԱԿՆԻ

ՌՅԻԳ - 1874



1474

ՀՐԱՄԱՆՈՒ

Տ. Տ. ԳԵՈՐԳԵԱՅ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հառիճոյ Մենաստանի պատմութիւնը*) ընթերցողք կ'իշեն որ Արարատեան նահանգի քսան գաւառաց ստորագրութիւնը հետ զհետէ տալու ենք ի լոյս. նոցա մէջ եղած իւրաքանչիւր վանորէից ու քաղաքաց ստորագրութիւնները որք տպած ենք, որն էլ պիտի տպենք ըստ յաջողութեան ժամանակի:

Ուստի այս առթիւ պատե՛հ համարեցինք Արարատեան նահանգի միայն անուան, զըրից, օգոց, լերանց ու գետոց, Արագածոտն գաւառի և Արարատեան դաշտի աշխարհագրական տեղեկութիւնները —, ուրիշ գաւառացը թողլով յայլում ժամանակի — Վաղարշապատ մայրաքաղաքի Պատմութեանը նախընթաց կարգել, որոց մէջ է նոյն իսկ Վաղարշապատ, այս ինքն Արագածոտն գաւառի Արարատեան դաշտին մէջ, որ ասպնջական է հինաւուրցն Մասեաց և Արագած լերանց, որոց ստորոտէն սկսեալ բազուկ առ բազուկ կ'ըջապատեն զդաշտն և

(*) Պատմութիւն Մենաստանին Հառիճոյ գրաբառ՝ տպուած է ի Տփլիս յամին 1856.

28 3
4 3 - 60

այլ ծաղկաւէտ ու աղբւրահոս լերինք. ուրոց մէջ անթիւ անհամար կ'մնան կործան և կիսակործան Մստուածաշէն և շքեղազարդ Անբեր, թագաւորական պալատներ քերութաբանդակ աշտարակներով ի վէմն արաստոյս և յորձաքարս աղխաղխեալս, շուշանաբեր հովիտների մէջ, կանաչագեղ և զուարթածաղիկ դաշտերի երեսը եղեմաբուղիս արծաթափայլ գետերով պատած, քաղցրաշունչ և առողջարար օդոց շնչելով արգաւանդաբեր և պարարտարօտ պարտէզներու ծաղկանց հետ կ'ծիծաղեն, ուր հիւսիսը կ'զայ, ուր հարաւ կ'հնչէ: Այս այս երկրային դրախտը քառաւաղ և քարավազ գետերի մէջէն երկնային դրախտի տեսքը կ'բերէ. միայն մարդկային ոտքը այժմ կ'պակսի անտի՝ ի գործել և ի տնկել. ուրով և ամայի ու անմարդաբնակ կ'մնան Մստուածաշէն Տաճարներ:

Ի նախագիտելիս աշխարհագրական քրննութեան մերոյ յառաջ բերինք նախ՝ այն սխալ տեղեկութիւնները, զորոնք առանց ականատեսութեան մեր Աշխարհքի վրատուել են Ազգիս ականաւոր արդի մատենագիրներէն ոմանք իրենց գրուածոցը մէջ:

Երկրորդ՝ Արարատեան նահանգի դրից, օդոց, և գետոց ստորագրութիւնները ընդհանրապէս տրուած են տեղեկութեան մէջ, իսկ լերանց՝ մասնաւորապէս, որոնք կ'չըրջապատեն Արարատեան դաշտը միայն:

Երրորդ՝ Աղարշապատայ այս պատմութիւնը հանդերձ ներկայ աշխարհագրական տեղեկութեամբ ի կարգս ստորագրութեան Արարատեան նահանգի՝ գրաբառ գրած էինք զառաջինն. յետ այնորիկ երբ մտադիր եղանք զնոյնը ամսաթերթի միջոցաւ հրատարակել, գրեցինք զայն յաշխարհաբառ Աոստանդնուպօլսոյ. երրորդ է մեր աշխատութիւնը այս գրուածոց մէջ. զոր արդ. Հայաստանի — Երևանայ — աշխարհաբառով կ'հրատարակենք ի վայելս Ազգիս իբրև Առաջին Հատոր:

Իսկ Երկրորդ Հատորն է Պատմութիւն Աթողիկէ Մայր Եկեղեցւոյ յիշեալ քաղաքամօրն Աղարշապատայ և երից վանօրէից նորին:

Արքի հեղինակների ասած Արարարուն նահանգի վրա անհարազատ
դեղին-խիւնները *) :

Հայաստանի աշխարհագրական զրից վրա գրողներ որ ժամանակ
ժամանակ Ազգիս հեղինակներէն պակաս չեն եղած, ոմանք լիոնների,
ոմանք գետոց և այլք քաղաքաց կամ՝ վանքերի ստորագրական տե-
ղեկութիւն տուած իրենց գրուածոցը մէջ, ի սոցանէ ոմանք Եղիշէ
վարդապետի ասածին պէս միայն « Ի կարծ ընդոստուցեալ և ի լուր
զարթուցեալ, և ո՛չ անձամբ ի տեղւոջն պատահեալ, » ուրիշներէ
առկով ու գրելով, մեր հայրենեաց հնութիւններու, երկրի ու գա-
ւառաց իրական պատմութիւնը գրելուն տեղ՝ անհարազատ տեղե-
կութիւններով լցրել են. զորոնք Հայաստան չտեսնողները կարգալով,
զայն ամենը իրրեւ ստոյգ աղբիւր իսկութեանց կ'համարին :

Այլ մենք՝ որ հայրենեաց յիշեալ նահանգը անձամբ զննած ու
տեսածներս էլ ստորագրած ենք, մէկ մասին մէջ ծննդեամբ մեծցած,
միւսին մէջ էլ այս ստորագրութիւններս անելու ճամբորդութիւն
արած, յիշեալ հեղինակաց անհարազատ տեղեկութիւնները մեր
ստորագրութեան յառաջ մի առ մի կնշանակելով, որպէս զի ընթեր-
ցողք ճիշտ գաղափար ունենան Արարատեան նահանգի վրա, առա-
ւելապէս այն մեր ազգայինք, որոնք տեղեւու և երկրաւ Հայաստանէն
չատ հեռի են և միայն այն գրուածներին են ապաստան :

Մեր ձեռքն են հանապազօր Մխիթարեան վարդապետաց գրուած-
քը՝ որ մեր հայրենեաց երկրի աշխարհագրական վէպը կտան. այո՛
չէինք կարող մեղադրել ազգիս նախնի մատենագիրներէն նոցա տար-
բեր գրուածոց հանդիպելով, իբր թէ նոցա ճանապարհէն խոտո-
րած լինէին գաւառաց, գետոց և լեռանց որոշումներուն մէջ և ո՛չ
իսկ հակառակասու կ'ձանաչէինք զնոսա փոքր մի տարբեր խօսկու-
վը, թէ որ իրօք ևս տեսած լինէին նոյն տեղերը, որոց աշխարհա-
գրութիւնը կ'անեն :

Սակայն յիշեալ Ուխտին արդեան հեղինակներէն ոմանք ո՛չ միայն
կտարբերին ականատես վկաններէ, այլ և երկրի բնական զրից, լեռանց

ու գետոց իրօք եղածին դէմ կգրեն. որով և աշխարհագրական մա-
սանց մէջ նախնի մատենագրաց հակառակասու կերևին :

Ազգային հեղինակաց յիշեալ գրքերն են՝ Չամչեան Պատմութեան
երեք հատորքը, Հին Հայաստան և Հնախօսութիւնք նորա՝ հայր
Ղուկասու Ինճիճեան, Յատուկ Բառարանը, Համառօտ Աշխար-
հագրութիւն հայր Ստեփաննոսի Եագճեան, և ի նորումս Աշխարհա-
գրութիւն հին և նոր Հայաստանեաց ասացեալ Մանուէլ վարդա-
պետի, որոց անհարազատ տեղեկութիւնները այս տեղ կ'գնենք ըն-
թերցողաց ծանօթութեան համար :

Սորանով այն բազմաշխատ հեղինակութեանց վրա մթութիւն
բերել չեմք ուզիր, այլ մեր նախնի աշխարհագրաց գրուածքը հաս-
տատել. որոնք անձամբ ի տեղւոջն պատահեալ, գրել են, և ար-
դեան հեղինակների չհասած կամ անհնարին եղած տեղերի ստորա-
գրութիւնները ի լոյս հանել. որոց համար Հին Հայաստանի հեղի-
նակն էլ կ'խոստովանի. « Զ յորովագունիք, կգրէ նա, զանց արա-
րեալ զնախնեաց ասացուածովք . . . և վայրապար լեալ նմա տըն-
տեսութիւն գործոց, և անհնարին գաւառաց բաժանմունս, զորոտս
և զսահմանս ընդ նոր գաւառաց համահաստուած ի մի տնօրինել, » :

Մանաւանդ թէ՛ և ո՛չ իսկ կարէի զանց աւնել յիշեալ տար-
բերութիւնները կամ լռելեայն թողուլ, մէկ՝ որ Եւրոպացի ճանա-
պարհորդք յաճախելով յԱյրարատ, այն ամեն տարբերութիւնները
իրանց լեզուով աշխարհք կհանեն և յայտնի պակասութիւն կ'ընեն
մեր յիշեալ համազգային հեղինակաց վրա, ինչպէս Գերմանացին
Վակներ, Արեխն և Ռուսք ոմանք. և երկրորդ ապագայ ազգային աշ-
խարհագիրք եթէ կ'լինին, այսպիսի ակամայ վրիպակների մէջ չըձգե-
լու փութով, զայն ամենը կնշանակենք ստորև :

Ա. Հայաստանեայց Հնախօսութեան հեղինակը Ա. հատորին մէջ
եր. 70, կգրէ Գաղղկացի Գուլիէլմոս անուն ճանապարհորդի Մասիս
լեռին վրա տուած ճիշդ տեղեկութիւնը. որոյ համար ականատեսու-
թեամբ կ'վկայէ նա՝ որ Մասիս լեռուն երկու է. Հնախօսը սորա հա-
կառակ իբրև հաւաստի կուզէ հաստատել թէ՛ Մասիսը մէ է, բայց
գագաթը երկձղի. որ և իւր նոր Հայաստանի մէջ առանց ականա-
տեսութեան կ'գրէ եր. 258. « Այլով ի Խորվիրապի՝ գագաթն նորա
(Մասիսի) երկձեղ երևի ի հեռաստանէ, մին խոնարհ առաւել սը-

(*) Այս յօդուածին գործառ. տպագրեցաւ յամին 1855, Կոստանդնուպօլսոյ նո-
յեան Ազաւնեյ օրագրի թերթերու մէջ :

րուածայր . . միւսն թարձր: ,, Որով նախնի հեղինակաց էլ դէմ կ'իս-
տի և ցոյց կտայ իր շտեմները զՄասիս. որ այնպէս չէ. այլ Մասիսը
իւր իսկութեամբը աւելի կգտնուի Գաղղիացի ճանապարհորդի ակա-
նատեսս վկայութեանը մէջ, քան ազգային Հնախօսի անստոյգ գրու-
թեան:

Բ. Անդ եր. 92. լեառն Արայի՝ Կիրակոս Պատմագրի վկայու-
թեամբը ,, յոտն Արադածու եղած ,, կտեղափոխէ Հնախօսը, և ա-
ռանց երկրին ծանօթութեան ջանք կանէ նորա տեղը դնել զլեառն
Արարատեան (զՄասիս) ասելով, ,, լինել նոյն իսկ լեառն Արարա-
տեան ,, , որով թէ՛ իր գրուածքը ընթերցողաց միտքը կշփոթէ, և թէ՛
ազգային պատմիչները անհարազատութեան կարծիքի տակ կձգե-
բայց մենք Արարատեան դաշտի լեռանց ստորագրութեանը մէջ ցոյց
տուած ենք թէ լեառն Արայի՝ ոչ է լեառն Արարատեան, ինչպէս
նոցա երբեմն գրած՝ Գեղարդն ու Եղուարդը Արայի լեառն Արագա-
ծոտն գաւառի մէջը լինելով Քասաղ գետի վրա, իւր արևելքէն
Շամիրամայ ասոցեալ լեառն կայ (Պոտայց գաւառին մէջ), որու
վրա ամենևին ծանօթութիւն չունի Հնախօսը, Ուստի թէ Կիրակոս
պատմիչ Արայի լեռին տեղն ևս չի որոշեր, մեծ զժողարութիւն
պիտի քաշէին Հնախօսութեան ընթերցողք՝ զլեառն Արայի Արա-
րատ լեռին տեղը փոխադրելու:

Գ. Անդ դարձեալ գետոց կարգը՝ եր. 156. ,, զՀուրագղան գետ,,
Վարդանայ խօսքին սուրբնեցելով, Նիգ գաւառի մէջ կգնէ. բայց
այս Հրազդան՝ ինչպէս իւր ստորագրութեան մէջ՝ Վարաժնունեաց
ու Պոտայց գաւառներէն անցնելով, Քճնոյ յառաջէն մինչև յԵրևան
իւր խորաձորովը կբաժանէ զՊոտայք՝ ի Նիգ գաւառէն, և անտի ի
վայր Արարատեան դաշտը իջնելով, կթափի յԵրասխ:

Դ. Անդ եր. 158. Քասաղ գետի տեղը չի որոշիլ, թէ ո՞ր գաւա-
ռի մէջ է, և ուստի՞ կառնու սկիզբն: Այս գետը կըղխի Քասաղ
հոսանքուն գիւղի տակէն Նգատան մէջ. Սաղմոսաբանից և Արայի
լեռան խորաձորէն մտնելով յԱրագածոտն, Վաղարշապատայ արև-
մուտքէն անցնելով՝ մէկ ժամու հեռաւորութեամբ անտի ընդ հա-
րաւ՝ կխառնի Մեծամորի հետ:

Իսկ Ազատ գետ ի կարգս գետոց ամենևին կթողու անյիշատակ.
յետադայ պատմիչք և աշխարհագիրք ևս Խորենացւոյ պարզ գը-

րուածքը ձգելով, որով նա յայտնի կորոշէ և գետոյն տեղը, նոքա
ամենքը ևս Ազատ գետը կխառնեն Մեծամորի հետ, որոց տարբերու-
թիւնները յառաջ կբերենք այս տեղ:

Հայաստանի Հնախօսը նոյն գրոց Ա. հտր. եր. 157, Ազատ գետի
տեղը զՄեծամոր յիշելով, շատ տեղ էլ կնոյնացնէ յեր. 167, ա-
ւելի Բիւզանդայ հետեւելով, քան Խորենացւոյն:

Յատուկ Բառարանին մէջ՝ որ Մխիթարայ գործքն է, եր. 234,
Ազատ գետի համար գրուած է, ,, Ազատ գետ կոչի և Մեծամոր ,, .
իսկ Մեծամորի համար՝ կգրէ, ,, Տե՛ս և Ազատ ,, :

Չամչեան պատմութեան, Գ. հատոր, աշխարհացոյց պատկերի մէջ
առանց Մեծամորի յիշած է միայն Ազատ գետ, Նոյնպէս և հասա-
րակ բառարանի աշխարհացոյցին մէջ:

Այս ամեն սխալները յառաջացած է Բիւզանդայ գրուածքէն. զոր
Հնախօս Ա հտր. եր. 167, յառաջ կբերէ, ,, յամուր բերդէն ար-
քունի, որում կոչեն Գառնի մինչև ի դաշտն Մեծամորի ի բլուրն՝
որ անուանեալ կոչի Գվին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին
մեծի Արտաշատու ,, :

Ձկնի այսորիկ յառաջ կբերէ Խորենացւոյ բանը, որ յայտնա-
պէս կհակառակի Բիւզանդայ ուսածին. ,, Հասանէ, ասէ Խորե-
նացին, ի միջոց աշխարհիս վերագոյն քան զակունս Մօրին մեծի
յափն Երասխայ մօտ յԱրմաւիրն ,, . Բ. գիրք. զլ. 4, որով և
Հնախօսն Բիւզանդայ այս վրիպակը՝ զոր Մեծամորի համար կգրէ լի-
նել ի բլուրն Գվնայ, կհամարի թէ Խորենացւոյ բանիւր կհաստատէ
զայն, առանց մտածելու թէ նա զՄեծամոր ,, յափն Երասխայ մօտ
յԱրմաւիրն ,, կնշանակէ, և ոչ ,, ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին
Արտաշատու ,, . ուստի կթափի Ազատ գետն յԵրասխ. — և այսպէս
Մեծամոր գետն ասոցեալ ի Խորենացւոյն մօտ յԱրմաւիրն, հեղե-
նակն Հնախօսութեան կառնու զայն Ազատ գետի համար ,, ի բլուրն
Գվնայ ,, :

Այս սխալները ուրիշ սխալանաց էլ մէջ կձգէ զՀնախօսը, որ
կարծելով թէ Յովհաննէս Վաթուղիկոսի նշանակած Մեծամորի ծո-
վակը Ազատ գետը պիտի լինի, կգրէ այսպէս. ,, նոյն կարծեմք լինիլ
(դ՛կատ գետ) և ընդ ծովակին Մեծամորի . . . զոր մերձ դնէ ի
Գվին ,, երբ նոյն իսկ Յովհաննէս Վաթուղիկոսի միւս վկայութիւնը

ևս կընթեանու, «Սպանեալ ընկեցին զնա ի ծովակն որ է ի Տիւսիսոյ կողմանէ ահանցն», Այս ահուէքն են, յորոց կըղխի Մեծամօր, և ծովակն է արդարեւ ի Տիւսիսոյ նորա, զոր Խորենացին լճակ Մեծամօրի կանուանէ:

Խորենացին Ազատ և Մեծամօր գետերը՝ որոնք իրարից որոշ են, որոշ որոշ ևս կնշանակէ. «Անտառ մի առ Ազատ գետովն տնկէ», (փոքրն Խոսրով). «Ազատ գետ Գառնուոյ ջուրն է», կվկայէ և Աարդան:

«Երթեալ Արտաշեսի ի տեղին ուր խառնին Երասխ և Մեծամօր», Բ. գիրք զԼ. 49: Բոյց Հնախօսը Փոստոսի աղճատախօսութեանը վրա հաստատ կմնայ:

Այս ամեն պարզ պատմական իսկութեանց վրա մենք էլ յաւելցնենք յուղղութիւն Հայաստանի Հնախօսութեանը, թէ Ազատ գետը ուղղակի Գեղամայ լեռներէն կըղխի, Գառնի գիւղի և Տրդատայ հովանոցին տակէն անցնելով՝ կթափի յերասխ Արտաշատու արևելքէն, Մեծամօրի խառնուրդից գրեթէ յինչև ութ ժամ հեռի:

Իսկ Մեծամօր գետը՝ որ կըղխի նոյն իսկ իւր անունով Մեծամօրի լճակէն, որոց համար վերը գրեցինք, այս լճակը իր ջուրը կառնու ստորերկրից ճանապարհաւ Արագած լեռին գագաթը եղած լճակէն, որպէս գրած ենք նոյն լճակի կամ ծովակի ստորագրութեանը մէջ, և այս լճակն կըղխի և կծովանայ մեր ստորագրած Զրէզ բլուրին տակը, որ ուղղակի Արագածու հարաւային փոքրիկ բազուկն է զառ ի վայր խոնարհած մինչև Աղարշապատայ արևմուտքը, և Արմաւրայ Տիւսիսէն. թէև Ազատ և Մեծամօր երկուքն ևս Երասխ կթափին, բայց երկուքի խառնուրդը իրարից ութն ժամու չափ, և սկզբնաւորութիւնները երկու աւուր ճանապարհ հեռի են:

Ե. ՅԱշխարհագրութեան Հ. Մաղձեան եր. 142. «Խոշափանք (Հոռոմնոսին վանք) Տիաղին և Թօփրագայէ՝ կցնին Ռուսաց սահմանին մէջ. որոնք Պարսից ու Տաճկաց հետ արած Ռուսաց պատերազմովը (1827 — 1828), Տաճկաց իշխանութեան տակ մնացին յիշեալ երկիրները, ինչպէս յատաջ ևս էին. ըստ որում Ռուսաց և Տաճկաց սահմանադուխ որոշուեցաւ Շիրակայ Ախուրեան գետը, և սոքա էլ գետոյն միւս կողմն են յարևմտեան Շիրակայ և ի Բագրևանդ:

Զ. ՅԱշխարհագրութեան Հ. Մանուէլի, տպագրեալ յամի 1857, եր. 153, Իվին քաղաքի համար կգրէ, թէ «Այս քաղաքը շինուած է Մեծամօր վտակին քով», փոխանակ Ազատ գետի արևելեան կողմն գնելու: Նոյնպէս և յեր. 155, Արտաշատ քաղաքը Մեծամօրի խառնուրդի վրա կընէ՝ Երասխայ հետ, փոխանակ Ազատ գետի վրա գնելու: Իսկ Աղարշապատ քաղաքի համար բոլորովն անհարազատ տեղեկութիւն կտայ յասելն յեր. 159, «Եւ կձգուէր (Աղարշապատ) Քասաղ գետէն ինչուան Մեծամօր գետը», որով ցոյց կտայ թէ յիշեալ քաղաքը երկու գետոց մէջ տեղն է. այլ ինչպէս Մեծամօր՝ նոյնպէս և Քասաղ՝ Աղարշապատայ արևմուտքն են:

Այսպէս էլ ընդհանրապէս քաղաքներ, գեղեր, աւաններ, ևս և քանի մի վանքեր ու մենաստաններ Արարատեան նահանգին մէջ անծանօթ կը կոչէ իրան հեղինակն Հին Հայաստանի, որ Հայաստանի հնգետասաններորդ աշխարհքն է:



Ա. ԱՐԱՐԱՏ *).

Մեր հայրենի աշխարհքի անունը սուրբ գրքէն գիտեն սկիզբը արուած՝ Արարատ, ինչպէս կը կարդանք այն տեղը « Եւ հանդիաւ Տապանն . . . ի վերայ լեռանցն Արարատայ », • Ծննդոց Բ. 4:

Ուրիշ ազգերի յառաջ բերած զանազանութիւնները մեր աշխարհքը յայս անուն կոչելուն համար՝ մեզ հարկ չէ այս տեղ կրկնել, ինչպէս Ատինացւոց և Ասորւոց, զորոնք կ'իշէ հեղինակն Հնախօսութեան Հայաստանի Ա. հտր. եր. 6. ըստ որում այս անուանակոչութեան համար աւելի զօրեղ փաստ ունինք՝ Եօթանասնից թարգմանութիւնը, յորմէ մեր Աստուածաշունչն է. որ Ազրամելիքայ և Սանասարայ փախուստը կ'գնէ դէպ ի Հայաստան՝ Եսայեայ մէջ. զլ. 1, 12. 38. « գնացին փախստական ի Հայս », երբ որ Աբրայական և Ատին Աստուածաշունչը կ'զրեն փախստական յերկիրն Արարատայ. որով ստոյգ կ'հաստատուի թէ Արարատը Հայաստանն է, « Հայրենատուր վիճակեալ աշխարհ մեր », ըստ Խորենացւոյն:

Սակայն ուրիշ ազգաց մատենագիրք մեր ազգի պատմութեանը հմտութիւն չունելով, այս նահանգական ա-

(*) Արարատ անունը Յովհաննէս Պատմ. Կաթողիկոս Արայի անունէն կ'համարի առնուած. « իսկ Արայի զշինութիւն աշխարհիս տնօրինեալ, յիւր անուն զընակութեան իւրոյ վայրս կոչէր Արարատ », • Խորենացին այս տեղ կակնարկէ Արայի գեղոյ արատաւորութիւնը աստ մեռնելուն համար. ուստի Արարատը կստուգարանի Արայի արատ, յայս միտ և կ'զրուի Արարատ:

նունը բուն իսկ Մասիս լեռին անունը համարեցին ի սկզբբաննէ մինչև ցայսօր *):

Բայց Արարատ՝ զաշտավայրին անունն է, որ Արայէն մնաց. ուր առաջին նահապետաց բնակարանը լինելով, ետքը բոլոր նահանգը այս անունով կոչուեցաւ. որոյ համաձայն և Խորենացին բոլոր Հայաստան այս զլեւաւոր նահանգի անունովը կը կոչէ, մանաւանդ որ նա ինքն Արարատ կանուանէ մեր աշխարհքը, և ոչ Արամայ անունովը Արմենիա **), ինչպէս օտար ազգերը:

Այս ևս պէտք է զիտել, որ Ասորւոց նախնեոյ անունը, որ Սեմայ որդին էր, Արամ լինելով, Խորայէլացիք Ասորւոց Արամ անունը կըտային. այս պատճառաւ Մովսէս ուրիշ ազգերին չուզեց պատճառ տալ, և մեր ազգը Արամայ անունովը կոչել, որ Ասորւոց ազգը հասկանան և այս երկու ազգաց նախնիքը մէկ մէկու շփոթեն, որոց ազգաբանութիւնը որոշ որոշ գրած է Սուրբ Գրոց մէջ ի Սեմայ և ի Յարեթէ. ուստի և Արմենիա բառէն այս երկուը անելով Մովսէս, Հայաստան աշխարհքը մեր արքայանիստ նահանգին անունովը Արարատ կոչեց Ասորւոց ազգէն որոշուելու համար:

Այլ թէ Արարատ անունը ևս ուրիշ ազգաց մատենագիրք ըստ շաւղաց Սուրբ Գրոց բոլոր Հայաստան աշխարհքին կըտան, բայց ազգային մատենագիրք կըսեպհա-

(*) Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեան վայր ի վերոյ տեսութեամբ իւր Ստորագրութեան Բ. հտր. եր. 5, մէջը Մասիս լեռին համար կ'զրէ « ի Սուրբ Գիրս Արարատ անուանեալ »:

(**) Ուրիշ ազգաց զՀայաստան Արմենիա կոչելուն պատճառը՝ մեր Արամ՝ նահապետի քաջութեանց վրա ծանօթութիւն ունենն է, որ « ընդ չորս ոլորտս երկրի », ինչպէս կ'վկայէ Յովհ. Վթ. Պատմաբանն:

կանեն զայն Այրարատեան նահանգին. որոյ զլեւաւոր տեղին այս անուանով՝ նրա դաշտավայրն է Արարատեան դաշտ ասուած. յորմէ և նահանգն Մեծին Հայոց հնգետասան աշխարհաց մէկը, զոր Խորենացին իր աշխարհագրութեան մէջ Փոքր Աշխարհ կը կոչէ, և յետինք՝ Նահանգ, և նոյնը գաւառներու կը բաժանէ. որոնք նոյն պատմագրի դասակարգութեամբը սորա են:

- | | |
|-----------------------|-----------------------|
| ա. Բասեան, կամ Բասէն. | ժա. Մասեայ սոսն. |
| բ. Գաբէղէանի. | ժբ. Ղալկասոս. |
| գ. Աբեղէանի. | ժգ. Արգիշտի կամ Արգ. |
| դ. Հաստի. | ժդ. Ալու. |
| ե. Արշարունի. | ժե. Նիգ կամ Նիգարուն. |
| զ. Բաբերկանի. | ժզ. Արարատ. |
| է. Ծաղկոսն. | ժէ. Մաղաղ. |
| ը. Շիրակ. | ժը. Արարատնի. |
| թ. Անանի. | ժն. Ոսրան. |
| ժ. Արագածոտն. | ի. Գեղայ դաշտն յԷրար: |

Արդ Այրարատեան նահանգը Խորենացւոյ ասածին պէս ունի « զամենայն պարարտութիւն *) » ի շահս և ի դարման մարդկան պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան, դաշտս արգաւանդահոյ՝ կը վկայէ Փարպեցին ի թղթ. 17 և ի 19. դարձեալ, « բերէ յինքեան (Այրարատ) զօրինակ լեռութեան՝ ըստ բանի զրոյն՝ երկրին Ազիպտացւոց և զգրախտին Աստուծոյ . . . զդաշտս մեծատարածս և որսալիցս, զլեռնս շուրջանակի գեղեցկանիստս և պարարտարօտս զհոծեալս էրէովքն կճղկաբաժնիւք և որոճայնովք և այլովքն ևս բազմօք ընդ նո-

(*) Աշխարհագր. Խորենացւոյն՝ տպեալ ընդ մատենագրութեանն, հր. 611.

սին. յորոց ի վերուստ ի կատարածն ջրոց հոսմունք անկարօտ ոռոգման արբուցանելով զդաշտս, մատակարարէ անբաւ բազմութեամբ յԱստանն կանամբք, արամբք և ընտանեօք զանպակասութիւն զինւոյ և հացի, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղաբուղե սերմանցն:

Ունի Այրարատ շատ գետեր, որոց զլեւաւորքն են Ափրատ, Արասիս, Ախուրեան, Հրազդան, Ազատ և այլք, որոց մէջ կթափին շատ վտակներ լեռներէն աղբերանալով:

Իսկ լեռներու մէջ երեւելիքն են Մասիս՝ Հայաստանեայց ազգի հնութեան հինաւորց վկայ իւր անմահ անցից յիշատակներով. Արագած լեռուն՝ երկրին մշտնջենաւոր բարութեան աղբիւր. նաև Շիրակայ, Ծաղկունեաց և Աղղունանու լեռները իւրեանց մայրագերան փայտերով:

Իրաւամբք կը կոչեն Աղեշէ և Խորենացին Այրարատեան նահանգը՝ միջոց աշխարհի, և Փարպեցին՝ հոյակապ, հռչակաւոր և ականաւոր, մանաւանդ թէ զլուս աշխարհաց Հայոց, ի թղթահամարն 22:

Իսկ Խորենացին դարձեալ սեպհական բնակարան արքայի կոչելով զայն, կը գրէ. « Բանդի սովորութիւն էր արքայի միայն բնակիլ Այրարատ, *) », Ազգիս նահապետութիւնը սկսելու օրէն Արարատն եղաւ բնակութիւն Հայկայ սերնդոց՝ Արմենակայ, Արմայիսայ, Շարայի, Ամասեայ, Արամայ և ուրիշներին. յետ որոց Հայկազանց և Արշակունեան թագաւորաց եղաւ զահ արքունի, ետքն էլ ձմերանոց նոցա՝ ինչպէս ին Հայաստանի մէջ **):

(*) Բ. գիրք. գլ. 22.
(**) Հին Հայաստ. հր. 379.

Այրարատ նահանգը՝ որ վերը յիշուած քսան գաւառը
 էր մէջ կպարունակէ, արեւելքէն սահմանակից է Սիւ-
 նեաց, հիւսիսէն Տայոց և Գուգարաց, որոնք Ախալցխա-
 յի և Ղազախու առուած երկիրներն են, արեւմուտքէն՝
 Տուրուբերանայ (Մշու երկիրն)՝ որ կգատուի Բասենու
 լեռներով, և հարաւէն՝ Վասպուրական նահանգի (Վա-
 նայ երկիրն):

Այս դիրքով Արարատեան նահանգի տրամագիծն է
 արեւելքէն արեւմուտք տասնհինգու աւուր ճանապարհ եր-
 կայնութիւնը, իսկ լայնութիւնը հիւսիսէն ցհարաւ չորս
 աւուր ճանապարհ, այս ինքն Շիրակէն ցՄասիս:

Հայաստանի բազմաշխատ Հնախօսն իր Նոր Հայաստա-
 նի մէջ եր. 51, Մեծ Հայաստանի հնգետասան աշխարհ-
 քը երեք բաժնելով, երեք իշխանութեանց տակ կրնէ զայն,
 Տաճկաց, Պարսից և Վրաց, այժմեան Առուսաց, որոնք
 սահմանակից են Հայաստանի: Այս աղբիւրը երեսուն տա-
 րի յառաջ Հայոց աշխարհքը երեք բաժնած էին, իսկ
 Արարատեան նահանգը երկու բաժին եղած էր. արեւմտեան
 բաժինը Տաճկաց ձեռին էր՝ Բասէն գաւառէն մինչև Ա-
 խուրեան գետին եզերքը՝ Բագարան և Կողպ գեղերուն
 մէջ, արեւելեանը՝ Պարսից, որ Սիւնեաց արեւմտեան սահ-
 մաններէն կսկսի, և Վասպուրականի հարաւային ա-
 րեւմտեան կողմէն՝ հին Նախիջևան քաղաքէն մինչև նոյն
 Ախուրեան գետը: Հարաւոյ կողմէն՝ Մասիս լեռնէն, և
 հիւսիսի կողմէն՝ Սեանայ ծովէն սկսեալ Շիրակայ հա-
 րաւային եզերքովը մինչև Ախուրեանի խառնուրդը Ա-
 րասխայ հետ՝ Պարսից ձեռքն էր մինչև Առուսաց պատե-
 բազմը նոցա հետ Փրկչական 1827 թիւը, որ ժամանակ

այդ ընդարձակ երկիրը՝ որ Արարատեան նահանգի մէկ
 մասը կը կացուցանէ, Արարատեան գաշտովը մէկ տեղ՝
 Առուսաց ձեռքն անցաւ, ինչպէս որ նշանակեցինք՝ մի և
 նոյն տեղերը սահմանազրուխ կարգելով յիշեալ երկու
 դրացի ազգաց հետ, այս ինքն արեւմուտքէն Տաճկաց հետ
 Ախուրեան գետը սահմանազրուխ կարգելով, իսկ հարա-
 ւային արեւելեան կողմէն՝ Արասիւը Պարսից հետ:

Եւ ըստ որում Այրարատեան նահանգի արեւելեան
 կողմերը յառաջին պատերազմներէն Առուսաց ձեռքն էր,
 ինչպէս Փայտակարան և Ատրպատականի արեւելեան կող-
 մը մինչև Կասպից ծովը, նոյնպէս և հիւսիսոյ կողմէն
 Գուգարաց և Տայոց նահանգի (Ախալցխայի երկիրը) մէկ
 մասը, սոցա հետ երբ որ Արարատեան գաշտը, Արագա-
 ծու և Մասեաց ոտին գաւառները ևս Վրաստանի հետ
 միացրին, բոլորը միատեղ կոչեցին “ Առուսաստան յայն-
 կոյս Կաւկասու », և մէկ Կուսակալութիւն կազմելով,
 իրանց սահմանադրութեամբը բաժանեցին զայնս քաղա-
 քաց վերակացութեանց տակ:

Բայց մենք յիշեալ նահանգի նախնի գաւառաց բա-
 ժանմունքը չշփոթելու համար, մեր աշխարհագրաց ոճը
 կպահենք. և իւրաքանչիւր գաւառաց նախնի անուանա-
 կոչութիւնը պահելով, նոցա ստորագրութիւնը կանենք,
 ցոյց տալով թէ՛ հիմա ի՞նչ կոչմամբ է այս ինչ գաւառ,
 կամ ո՞ր քաղաքի կառավարութեան տակ է. ըստ որում
 Յովհ. Ապիսկոպոս Շահխաթունեան յիշեալ գաւառաց
 քանի մի տեղերու ստորագրութեան մէջ այժմեան քա-
 ղաքական սահմանադրութեանց հետ զնալով, մեր նախ-
 նեաց նահանգ կամ գաւառ կոչածները՝ նոր բաժանմունք-
 ների հետ է խառնել, որով և կօտարացնէ զայնս ազգային
 մատենագրաց գրուածներէն. նոր բաժանմանց հետ հին

անուանակոչութիւնները չխիշելով, ինչպէս Սիւնեաց չորրորդ դաւառը Գեղարքունի՝ կղնէ գաւառ Արարատայ*): նոյնպէս ևս Թալին և Թալիշ Արադածոսն գաւառի գիւղորայքը (ի հնումն Արուճ՝) գաւառ կանուանէ**): որոց համար հին Հայաստանը կգրէ եր. 140:

Ըստ այսմ յիշեալ հեղինակը նախնեաց մէկ գաւառի մէջ քանի մի գաւառ որոշելով, մեր աշխարհքի նախնի սահմանաց և որոշմանց վրայ մթութիւն կբերէ. զորս մենք վերստին կընոյնացնենք, ինչպէս որ նոյն է:

Գ. Օր Արարատեան:

Արարատեան նահանգի գաւառաց շատերը լեւնային են, խոտակետ և շատաջուր. ուստի և նոցա օղը մաքուր և բարեխառն է քան զգաշտային գաւառներին, ուր որ աւելի ֆլասակար է օղը ամառ ժամանակ, քան թէ առողջարար. և ըստ այսմ լեւնագաւառների մէջ ամառ ժամանակ օղը աւելի ցուրտ և պարզ է՝ ինչպէս Բասէն, Շիրակ, Նգատուն, Ալարաժնունիք, Աբեղեան և Ղաղատ գաւառների մէջ. իսկ ձմեռ ժամանակ աւելի մեղմ է սոցա օղը և ջերմ քան զգաշտայինները, ձմեռը շարունակ տեւելու համար, ուր որ մինչև Ապրիլ ամսոյ կէսը կը մնայ ձիւնը առանց արեւու ներգործութեան:

Բայց գաշտային գաւառները՝ ինչպէս են Արարատեան, Շարուրայ, Արշարունեաց և ուրիշ խոնարհ տեղերուն, ընդարձակ տափարակութեան պատճառաւ ձմեռը սովորաբար հիւսիսային սառնամանիքը փչելով, այն-

քան պարզ և ցուրտ կլինի օղը, որ երկիրը տեղ տեղ կպատառի և իրբև խրամ կբացուին. թող զայս, կովածու, կրաշաղաղ շինուածքն անգամ կպատառուին օղոյ խրստութենէն. ըստ որում հողմն ձիւնը կսրբէ և երկիրը զբրէթ է կմնայ անծածկոյթ:

Արանց ամենին մենք ներկայ ականատես կլինինք, և յիշած տեղերիս ջրերն ևս այնքան կսառին ձմերուտայ սաստկութենէն, մինչև որ շատ տեղ սառոյցը կհալին և հարկաւորութեան գործ կղնեն. իսկ թէ որ հիներուն հարցնենք, նրանք ևս այս կվկայեն. յորոց Խորենացին Արարատեան գաշտին համար Արմաւիր մայրաքաղաքին վրայօք « յերկարեալ ձմերայնոյն ի դառնահոս փչմանէ հիւսիսոյ՝ պողեցեալ ձուլեալ վտակն, ոչ ուստեք արբուցուելն թագաւորականին զտանէր տեղոյ *):

Եղիշէ բոլոր Հայաստան մէկ տեղ առնելով կըգրէ, « ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց », **). թող զայս. նոյն իսկ ազգիս նահապետութիւնը սկսելուն՝ Ներքովը կյօխորտար մեր Հայկայ վրայ Խորենացու ասածի պէս. « բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց », ***):

Արարատեան նահանգի այս ցրտութեան փորձը առին Գերջան (Թերջան) գաւառի ժողովուրդը, երբոր այն տեղէ Արարատեան և Սիւնեաց երկիրը գաղթեցին Անկթամիր բռնաւորի հրամանաւ, ո՛ր ժամանակ, « էին աւուրք դառնաշունչ և դժնդակ օղոյն ձմերայնոյ. և յետ

(*) Խոր. Բ. գիրք, զԼ. 1Թ:

(**) Եղիշէ. եր. 344:

(***) Խոր. Ա. գիրք, զԼ. ԺԱ:

(*) Բ. հտր. եր. 235:

(**) Անդ. եր. 46:

երկուց աւուրց յանկարծակի ձիւն սաստիկ եկն ի վերայ նոցա. և ի գիշերին յայնմիկ պաղեցաւ ամենայն երկիրն և բազում քրիստոնեայք պաղեալ մեռանէին, *, *):

Բայց այս դաշտավայր գաւառները տարուան երկու բաժինը գարնան և աշնան օդոց մաքուր բարեխառնութիւն ունենալով, այն ժամանակ երկրի գեղեցկութիւնը կտեսնուի, արդարև զբօսելոյ տեղեր են հովիտք և ծաղկաւէտ դաշտերը. վասն զի Երարատեան դաշտը շրջապատող լեռներու վրա, ծործորների մէջ, դետերի և սառնաբուղի աղբիւրների եղբքը, նոյն իսկ գիւղական բնակիչ ժողովուրդն էլ վրանաբնակ Վիւրտերի հետ կլծափառին հովասուն լեռների օդը ծծելով, լեռները դէպ ի վեր կելանեն. քանի որ ամառը կյառաջանայ, այս վրանաբնակներն էլ լեռնաձայր ձիւնների մօտենալով, զովազին օդերի մէջ իրանց խաշինքը ձնծաղեկների վրա կարածեն:

Այս գաւառների մէջ առանձին յատկութիւն ևս ունի Երարատեան դաշտի օդը, Մասիս և Երազած լեռների բևեռական կողմերէն մէկմէկի հանդիպակաց լինելու պատճառաւ. վասն զի այս տեղ տարուայ չորս եղանակի փոփոխման հետ օդն ևս փոփոխական ներդործութիւն ունի:

Ինչպէս աշնան անձրևային եղանակին Մասիսի գլուխը ձիւնած ժամանակ, Երազածոտն գաւառը եղած բերքերը ցուրար կտանի, սորա հակառակ Երազածը ձիւնկուն՝ Մասեացոտն և Երչարունիք եղած բերքերը ցուրտէն կըխաշին. այսպէս ևս դարնան սառը եղանակին կպատահին:

(*) Թովմայ Մեծօփեցի:

Ամառուան մէջ սովորաբար Երարատեան դաշտի օդը փնասակար է, որ կպատճառէ հիւանդութիւն, դոզ ու տենդ, և այս կյառաջանայ ճախնային ջրերէն, շամբոտ ու եղեգնուտ տեղերէն. որոնք գրեթէ՝ դաշտի խոնարհ տեղերը ամեն բունած են. սոցա մէջ ևս աւելի բրինձ ցանելով, որ Հայաստանի սովորական բերքն է, այս փնասակարութեանցը օգնութիւն կանեն անթիւ մոծակաց փնասակարութիւնն էլ:

Յաճախ անձրև կգայ Երարատեան դաշտը՝ երբ որ պարզ օրերը յանկարծ Մասիսի ձիւնապատ գագաթը ամպ կը պատէ, բոլոր դաշտի մթնոլորտը իսկոյն տարածելով, կը մթնացնէ երկինքը և յորդ անձրև կտայ: Այս դէպքը կը պատահի երբ որ Երազածու արևմտեան հիւսիսային կողմէն էլ փոքրիկ ամպ կերևի, որ աւելի սաստիկ անձրև կը գայ:

Լեռնային գաւառք՝ որք դաշտին շրջապատը կտարածուին, ձմեռուայ ցուրտ օրերը անշուշտ վկայք կլինին Արդուաց լեռների հետ Սանդոպ դայիկի պատմութեան անցքին, որ «Պատահէ բքոյ ի լերինս Արդուաց առեալ զմանուկն . . . ի մէջ ստեանց իւրոց մնալով ի ներքոյ ձեանն վերիս տիւս և զերիս գիշերս, *, *): Աւ առաջնոյն Տիզրանայ որ ձիւնի տակը մեռաւ **), որ կհաստատեն Թովմայի Երծրունեոյ և Վսենոփոն Յոյն մատենագրի գրուածքը, զորոնք Հնախօսութեան հեղինակը յառաջ կբերէ յԱ. հար. եր. 42, 43, և 44. որոց համաձայն կը գտնուիք Երարատեան և Արնոյ գաւառները ցրտութեան սատիճանին մէջ. քանզի ձմեռ ժամանակ մինչ ամեն դաշտավայրք ցրտութեան սառնամանիք կպատեն դառնահաս:

(*) Խորեն. Բ. գիրք. գլ. Լ. 2:

(**) Անգ . . . գլ. 48:

շունչ սաստիկ օդով, յիշեալ լեռնագաւառները մարդաչափ բարձրութեամբ թանձրացած ձիւնին տակը կը ծածկուին. ճանապարհներն անգամ անանցանելի կլինին անասնոց համար՝ որոց մէջէն ճանապարհորդք և կարաւանը չկարողանալով անցնիլ, շատ անգամ բռնքէն կը խեղդուին, երբ որ հողմը բարձր տեղերու ձիւնը ճանապարհի վրա կղիզէ, ինչպէս սովորաբար Սեանայ ծովի եղերքը, որ մինչև Գուգարաց նահանգը կհասնի, որոնք հասարակաց բառով Մաշտոցներ կը կոչուին:

Այս ճանապարհը՝ որ Արարատեան լեռնագաւառաց բարձրութիւնն ունի, անընդմիջաբար ծովեղերքը շրջապատած լինելով, ձեան հոսանքը լեռնէն իջնելով, ցրտի սաստիկութեան ժամանակ այնպէս կհաւասարի բլուրին հետ, որ կարաւանը շարթներով երկու կողմը կարգելուին կմնան. շատ անգամ պատահած է որ բեռնակիր անասունք մարդով մէկ տեղ հողմակոծեալ ձիւնն ծովը ձգած է: Այսպիսի վտանգէ ազատելու համար մարդիկ հետիոտս օրերով դժուար տեղերը կընդլայնեն և ապա իրենց կարաւանը կանցնեն. խիստ արքունի սուրհանդակաց անարգել երթեկութեան համար ճանապարհի վրայի գիւղականքը կպատրաստեն ամսական աշխատութիւններով:

Այսպէս են ձմեռ ժամանակ և բովանդակ Նոյս, Շիրակայ և Արտայց գաւառների լեռնակողմանց ճանապարհները Արեւանայ հիւսիսային և արևելեան կողմերէն. որոնք բարձր լեռների մէջ ուրիշ տեղերէ աւելի սարահարթ զիրք ունենալով, ճանապարհորդել չեն լինիր երբէք, ուր որ ձիւնը մարդաչափ կբարձրանայ:

Այս սովորական է մեր երկրի յիշատակեալ վերնագաւառներին. թող որ Մասեացոսն գաւառը՝ որ Արարատեան

տեան դաշտին և Արշարունեաց սահմանակից է, և յիշեալ տեղերէն աւելի ցած, մեր ժամանակին՝ սորա օդոց ցրտութեան համար այսպէս կպատմեն, որ Պարսից իշխանութեան ժամանակին շիւսէին խան Սարգարի օրովը ձիւնը այնքան շատացաւ, մինչև որ լեռներ ու ծործորները ծածկեց. վայրենի գազանք ուտելք և տեղ չը գտնելով, ի բաց դնելով ահ և երկիւղը, խուճի խուճի կգային զեղերը կթափէին. խեղճ անասունքը կարծես թէ Ուրհայեցոյ գրածը կըստուգեն եղեր, որ ի թուին Հայոց ՋՆ (1056) կը գրէ. «Անասունքն ջուրը ջուրը լինէին և թռչունքն երամ երամ ի փողոցս և ի տունս մտանէին», *): Այս լսելով Սարգարը, հրաման կհանէ ամեն գիւղէ խոտ ժողովել և տանել Մասեաց լանջին վրա տեղ տեղ ցրուել՝ որ թշուառ գազանքը կերակրուին:

Դ. Արարատեան դաշտին շրջապատ լեռները:

Ա. ՄԱՍԻՍ:

Հայաստանեայց աշխարհքին առաջի աշխարհահոյս լեռն պարծանք մեր Հայրենեաց և մեր Հայկազուններէն Մասիս սեպհական անունը վրան առած Ամասեայ նահապետէն, որ Հայկայ սերունդէն ութերորդն էր, է Հայաստան աշխարհքի Արարատեան դաշտին մէջ: Սորա անուանակոչութեան համար Խորենացին կվկայէ որ՝ Ամասիայի անունէն առնուած է. «Իայց զլեռուն, ասէ, Ամասիա անուանէ իւրով անուամբն Մասիս», **):

(*) Հնախօս. Ա. Հատ. եր. 45.

(**) Ա. զերք. գլ. ԺԱ.

Մեծամարտին և բարձրագագաթ է Մասիս լեռը. իր աշխարհագրական դիրքն է ընդ 39. 30. աստիճանաւ հիւսիսային լայնութեան նոր աշխարհագրաց հաշուով :

Բարրոտ՝ որ Մասիսը զննեց, 1828 թուին՝ նորա բարձրութիւնը Ովկիանոսի մակերևութէն կընէ 16254 փութ Փարիզոյ աւելի. իսկ նորա գագաթան բարձրութիւնը դաշտի հաւասարութենէն մինչև գագաթը՝ երեք վերստ Ռուսաց :

Սորա գրածէն աւելի տեղեկութիւն տուաւ Գերմանացին Մ. Բեխ. որու յօդուածքը Տփլիսու Սովկաս անուն շայ և Ռուս լրագիրք հրատարակեցին 1845 և 1846 թուականների մէջ :

Մեր աղբային մատենագիրք Մասիս լեռան բարձրութեանը համար համառօտ՝ բայց ճիշդ խօսեցած են. Ազգութանգեղոս եօթն աւուր ճանապարհ կընէ նորա բարձրութիւնը. շեթում պատմագիրը՝ շայաստանի մէջն է, կըզրէ, լեռան Մասիս, ամեն լեռնէն բարձրագոյնը՝ որ երկրիս երեսը կզանուին :

Սոցա առաջինը կուղղէ Բարրոտի սխալը, որ Մասիսի բարձրութիւնը մինչև երեք վերստ կփոքրացնէ. իսկ երկրորդին անհամութիւնը կերևի աշխարհագրութեան մէջ, որ կարծիք կանէ թէ աշխարհքիս մէջ միմիայն Մասիս լեռան է ամենէն բարձրագոյնը *) :

Մասիս լեռան Ազգարշապատայ ուղղակի հարաւային կողմն է իրրև օր ու կիսոյ ճանապարհ Արասխայ այն կողմը՝ Արարատեան դաշտի հարաւային ծայրը, որ շուրջանակի լեռներով պատուած է, լեռան երրորդ բաժինը գագա-

(*) Աշխարհքիս ուրիշ բարձր լեռների համար քան զՄասիս, տես ի ճանապարհորդութեանն Աականների Գերմանացոյ .

թամբն հանդերձ թանձր ձիւնով ծածկուած է ամառ և ձմեռ :

Խորենացոյ գրած պատառուածքը լեռան արևելեան երևան է. գագաթէն մինչև կէսը կհասնի ահագին ձորի պէս բացուած, ուր կսկսի մեծ վեհը, բայց իրեն ձիւնաթաղ գագաթը հարաւոյ և արևմտեան կողմէն՝ ամբողջ և միապաղաղ են. դագաթնակէտը երեք փոքրիկ բլրածե ոստեր կան ձիւնեղէն բարձրութեանը մէջ, արևելեան և արևմտեան ոստերը հաւասարաչափ բարձր են քան ըզհիւսիսայինը:— Այս բոլորակ գագաթան արևմտեան ըստորոտը, որ լեռան մինչև երրորդ բաժինը իջած է, և ամառը հազիւ թէ երակ երակ սեռութիւն կերևի վրան, փոքր տափարակ լանջ ձեւացած լինելով, Բարրոտ իր ճանապարհորդութեան ժամանակին մինչև այս տեղ միայն կարողացաւ ելնել, յամին 1828, և փայտէ Խաչ կանգնել :

Մասիսի սև պատառուածքը Խորենացոյ յիշելովը՝ շայաստանի շնախօսութեան հեղինակը մեծ սխալանաց մէջ ձգեր է այլ և այլ անստոյգ ստորագրութիւններով այս մեծ լեռանը վրա, որոնք նորան սեպհական չեն և ընդդէմ կեղանն ականատեսների գրուածոց. յիշեալ հեղինակը ինչպէս շնախօսութեան մէջ, նոյնպէս ևս իւր Նոր շայաստանին մէջ հաւաստութիւն չունի Մասիսի ստորագրութեան, որոյ մէջ ինքը խոտորելով, լեռան ևս այնչափ կօտարոցնէ, մինչև ականատեսների աչքից կարծես թէ կհանէ զայն. յիշեալ երկու գրոց մէջն ևս հեղինակը Մասիս լեռան միապաղաղ գագաթը երկձեղ ցոյց կտայ. բայց այն մանր երևցած ոստերը հազիւ թէ գագաթին հարթ հաւասարութեանը մէջ կնշմարուին. որովհետև ինչպէս որ զրեցինք, Մասիսի սիւնի պէս բարձրացած ձիւնաթաղ գագաթը արևելքի կողմէն սկսելով մին-

չև հարաւ և արեւմուտքի կողմը բոլորչի է, որ ամենեւին անմերձինալի է մարդկային ոտից, միայն հիւսիսի երեսէն պատառուածքը երեք ոտի ստորոտէն իբրև ձորակ զառի վայր բացուած ու լայնացած է :

Ուստի այս ստուգութեանը դէմ կգայ 'Նոր Հայաստանի գրածը, որ կասէ, Խորվերապի կողմէն Մասիս լեռան գագաթը երկձիղ կերևի հեռուէն, փոխանակ ասելոյ երկու է Մասիս լեռը՝ մեծ և փոքր, և խօսքը համառօտելոյ թէ՛ ինքը ականատես չէ Մասիս լեռը, և այս չխօստովանելովը մեծ սխալ կպատճառէ նորա ստորագրութեան մէջ, որով և մեղ առիթ կտայ բանադատելու :

Իր ականատես չլինիլը այս տեղէ յայտնի է, որ Մասիսի գագաթը երկու ճիղ կբաժանէ, այս բաւական չէ. Եւրոպացի ճանապարհորդներէ ևս՝ որոնք որ երկու առանձին լեռն գրել են ականատեսութեամբ Մասիս անուանով, յիշեալ հեղինակը աշխարհագրաց այս մեծ սխալ կհամարի՝ ինչպէս կգնէ Ս. հոր. Հին Հայաստանի եր. 70. ուստի և պատառուած բառը՝ զոր նախնիք Մասիսի կանն՝ նորա հիւսիսային երեսը կէսէն վեր իբրև փոր բացուելոյն համար, մեծ փաստի տեղ ձեռք առել, ջանք կանէ երկձիղ ցուցանել Մասիսի գագաթը առանց ականատեսութեան, և ականատեսից երկու Մասիս ասելուն ցուցումը ջրել :

Բայց ինքը որ անհաւաստի լուրերէ՛ կարծեօք կգնէ այս ստորագրութիւնը, իր զրուածքէն կհաւաստենք նոյն յիշած հատորի 70 երեսին մէջ՝ իրեն ականատես չլինելը :

Երդ Գաղղիացի Գուլիէլմոս Ռուպրիւքս անուն աշխարհագրին խօսքը, ցոյց կտայ Երասխայ և Նախիջևանայ մօտ կրկին լեռն Մասիս անուամբ, մեր հնախօսը

ուղիղով այս ջրել, կգրէ " զՄասիս որ առ Երասխաւ և Նախիջևանաւ, յայտնի գիտեմք մի լեալ և ոչ կրկին. ապա յայտ է թէ կրկին կոչել նորա անդանօր, վասն երկձիղ լինելոյ զլեոյ նորա ասէ ,, . յորմէ պարզ կերևի թէ Հայաստանի հնախօսը Մասիս լեռան կրկնութեամբը կը վստահանայ նորա միապաղաղ գագաթը երկձիղ ցոյց տալ և կրկին Մասիսը ուրանալ, համարելով գուցէ թէ դարաւոր յիշատակութեամբ մեզի հասած պատառուածքը երկու ճիղ բաժանած կլինի լեռնագագաթի միութիւնը, որ չէ այնպէս -- Ահա սխալանք ուղղութեան մէջ. բայց Միթարեանց զրոց մէջ ամեն սխալանք ուղղութեան տեղ կրունէ, և Գաղղիացի աշխարհագրի ուղղութիւնը սխալ կդատուի. — մենք էլ կասենք, թէ որ Միթարեանք տեսնելի ուղղութեանց մէջ այսպիսի սրխալանք կգնեն, և այնպէս ազգի հարստութեանց երակները տղրիկ պէս կծծեն, քանի՞ ստութիւններ ապա չեն սպրդեր անտեսանելի ճշմարտութեանց մէջ :

Մասիսի արեւմտեան լեռնագօտին հարաւէն յառաջանալով կերկարի լուսնաձև մինչև Երասխեան դաշտի արեւմտեան շրջապատը, այն է մինչև Երասխայ մուտքը յիշեալ դաշտին մէջ, ուր է Բարդող լեռն (Պողպայ լեռը) և անտի մինչև Ղակատ գաւառի հիւսիսային սահմանագլուխը, իսկ նորա արևելեան գօտին՝ որ առաջնոյ պէս երկայն տարածութիւն չունի, իւր վրա ունի փոքրն Մասիս, զոր ահա կգրեմք :

Բ. ՓՈՒՐ ՄԱՍԻՍ .

Փոքրն Մասիս մեծ Մասիսի արևելեան գօտւոյն վրա, որ դէպ ի Նախիջևան կերկարի, է բոլորակ լեռն, սրածայր գագաթ ցոյց տալով հեռուէն. ըստ որում ականա-

անոք կվկայեն որ միմիայն գազաթը մինչև վեց մղոն շրջապատ ունի, և շատ ղիւրաւ վրան կերնեն ապառաժ չլինելուն համար, այլ աւազուտ մանր խիճը ծաղկաւէտ դալարիներու հետ կհաւասարին :

Հայկազուն ճանապարհորդն մեր՝ որ ի նիւթ ստորագրու թեան իւրոյ Հայաստանի անսարանները կզննէր, յամին 1816, փոքրն Մասիսի գազաթը ելած կվկայէ թէ, 'Նրեանէն և Նախիջևանէն նայելուս՝ կարծիք կանի մարդ որ փոքր Մասիսի կատարը այնքան սուր է, ուր մինչև անգամ թռչունք ևս դադար չեն գտնել. բայց վերան ելած ժամանակը կտեսնուի սարաւանդ տափարակ իբրև վեց մղոնաւ շրջապատի. ի կետրոնին ծով կամ լիճ ի ձեանց հայելոցն հաւաքեալ, *) :

1474

Ապարզէ նաև հին ականատեսների աւանդութիւնը, յորոց զիտէինք, թէ այն լեռան տափարակ գազաթի վրա կան մեծամեծ գերեզմանաքարեր պարսկական զրերով լըծին եզերքը կճեայ տապաններ մինչև տասն և վեց ոտք երկայն, և հինգ կամ վեց ոտք թանձր. որոնք գերեզմանի ձևով պարկած են, և ի հասարակաց կը կոչուին օղոյն գերեզմաններ :

Փոքր Մասիսի բարձրութիւնը հաւասար է Երագած լեռան բարձրութեանը, ըստ որում քանի որ սորա վրա կտեէ ձիւնը ամառ ժամանակ, այնքան տեւողութեամբ ևս կմնայ փոքր Մասիսի վրա :

Ահա այս լեռան է, զոր Հնախօսութեան հեղինակը նոյն գրոց Ա. հտր. եր. 70, կհամարի մեծն Մասիսի գազաթուն մէկ ճիւղը, իսկ 'Նոր Հայաստանին մէջ եր. 259

(*) Տե՛ս ի ճանապարհորդութեանն Մեքրովայ Թաղիագեանց :

կասէ, "Առ ոտամբն ունի Մասիս ոստ ինչ լերին, այս ինքն փոքր լեռան կցեալ ընդ իւր,," երբոր քանի մի մղոն տարածութիւն կայ երկուքին մէջ :

Գ. ԼԵԱՌՆ ՈՐԿՈՎՍՑ :

Ազգային պատմիչներէն Թովմայ Երծրունի՝ Բլուր Գինւոյ կանուանէ այս լեռը, և կզնէ յարեւմուտ հարաւոյ Երտաշարու և Գփնայ, բայց Հին Հայաստանի հեղինակը իր սովորական ականատես չլինելովը կտարակուսի իրանից անձանօթ կոչուած Երարատեան գաւառների մէջ՝ հաւաստի դնել նորա տեղը յԵրասխաձոր կամ Մասեացոտն գաւառներուն մէջ *), իսկ Երարատեան հինգ գաւառաց նոր Ստորագիրը **), ամենեկին կթողու անյիշատակ, թէ յո՞ր գաւառ կանկանի լեռան Որկովայ կամ Բլուրն Գինւոյ :

Լեռան Որկովայ բոլորագազաթ է և աւելի փոքր իր հանդիպակաց լեռներէն, բայց ստորոտը լայնանիստ, Մասիս լերին անմիջապէս հարաւային բազկի վերայ, որ ինչպէս ասած ենք՝ Երարատեան դաշտը կը շրջապատէ :

Մեծն Մասիսի արեւմտեան գօտեոյն վրայ է լեռան Որկովայ, որ Ազարշապատայ արեւմտեան հարաւ կանկանի, իր հարաւային կողմը ունելով Աոգովիտ գաւառը (Պալազետու երկիրը) : Այս լեռան և Մասիսի միջոցը՝ որ երկար ձորակ է, Երշակաւան քաղաքն է : Սորա արեւմտեան թեւն է Բամբակի ասացեալ լեռան. որու համար ստորև. իսկ իրեն հիւսիսային ստորոտին վրա է համանուն Որկովե

(*) Հին Հայաստան. եր 501 :

(**) Յովհ. Եպիսկոպոս Շահխաթունեան :

ասացեալ զիւղը, որ մինչև հիմա նախնական հնչումը կը պահէ :

Արարատեան նահանգի Արեղեան ասած գաւառին մեջըն է լեռն Որկովի *). նորա հարաւային արևելեան եղըրը, սորա ստորոտէն դէպ արևելք Մասիսի հիւսիսային երեսը կսկսի Մասեացոտն գաւառը :

Նշանաւոր եղաւ լեռն Որկովի յաչս Արարատեան դաշտի բնակչաց առաւելապէս այն մասին, երբ որ ասպնջական եղաւ նոյն բնակչաց 1827 թուականի նոցա գաղթելու ժամանակին բոլոր Արարատեան երկրէն ի Պայազիտ՝ Արևանայ Հասան խանի հրամանաւ Ռուսաց պատերազմի երկիւղէն, և երբ որ նոյն բնակիչք կէս մի գերի գնացած, կէս մի կողոպտուած, քնացորդ զիւղականքը հազիւ զիջուցանելով բռնակալի սիրտը՝ որ վարել կուզէր նոցա դէպ ի Պարսկաստան, ութ օր գաղթելոց բոլոր կարաւանը Որկովայ հիւսիսային լանջի վրա պատսպարուելով, նորա խոտոյն ու ջրովը շատացաւ, մինչև որ անցաւ գնաց Պայազիտ և նորա գիւղերը Օսմանցւոց տէրութեան մեջ :

Ռուսք Տաճկաց հետ 1828 թուականին պատերազմէն ետքը՝ այս լեռն երկու տէրութեանց հարաւային սահմանագլուխ հաստատեցին. ըստ որում Արևանայ երկրէն Պայազիտ գնալու ճանապարհը այս լեռն ստորոտէն կանցնի. ուստի սորա բարձրաւանդակին վրա պահապան Ղազախաց իջևանը հաստատուած է, ուստի բոլոր սահմանագլուխին կհսկեն :

(*) Հին Հայաստան սխալմամբ կրնէ այս լեռն Քակատ գաւառին մեջն :

Որկովայ լեռնէն ետքը այս լեռն Բամբակի է յիշեալ լեռների հարաւակողման շրջապատին վրա, որ ինչպէս գրեցինք, Արարատեան դաշտը կը շրջապատեն մինչև Ախուրեան գետոյն Արասխայ խառնուրդը :

Այս լեռն յիշատակութիւնը ամենևին չի՛ աներ շին և Նոր Հայաստանի հեղինակը, որու համար ի գիրս նախնեաց ևս չեմք դտնել որոշակի յիշուած. միայն Արարատեան հինգ գաւառաց նոր ստորագիրը այս լեռն անուանակոչութեան վրա հետևալ ծանօթութիւն կտայ գաւառական ավանդութենէ առնելով :

Լեռն Բամբակի կը կոչուի այն պատճառաւ, որ որքան ժամանակ սորա գաղաթի ձիւնը հալած չի լինիր, գաւառին բնակիչքը քանի որ բամբակ ցանեն, երկիրը կհասցնէ. իսկ թէ որ ձիւնը հալած ժամանակը ցանեն՝ բամբակը չի հասած ձմեռը վրա կհասնի. սորա փորձը շատ անգամ առած են բնակիչք. այս դէպքէն տրուած է լեռնս յիշեալ մականունը. այլ թէ հին ժամանակը ինչ անուն կտային սորան Արեղեան գաւառի բնակիչք՝ պատմագիրք չեն յիշատակել :

Սորա բարձրանիստ գագաթը քանի մի ծայր կը բաժանուի ընդարձակ ծործորներով, ուր որ մեծ լիճ կայ Այլըկեօլ ասուած, որու մերձ է Մերկիկուլայ գիւղը նոյն բարձրութեան վրա : Այս լճակէն կելնեն մեծամեծ ձրկներ՝ ճանառ, և այլ տեսակ, որ մինչև Արևան ծախու կրերուին զատկի օրերը. Ռուսաց պահապան Ղազախաց իջևանը այս լճին վրա է լեռնային ճանապարհները հսկելու, ուստից առանց մաքսի ապրանք չհանեն Ռուսաստան :

Այս լեռան որ կհատանէ հիւսիսային ծայր Աբեղեան գաւառի, ստորտը արեւելքի կողմէն կիջանէ մինչև Արշարունեաց գաւառը, իսկ արեւմտեանը կերկարի մինչև Բագրեանդ Տաճկաց սահմանին մէջ, որի մօտ է և Բագուան հին Բագնեաց Աւանը, այժմ Իւչքիլիսայ, որ է Երեք-խորանեան վանք Յովհաննու՝ Տրդատ Թագաւորի մկրտարանը:

Ե. ԱՅՍՈՒՆ ԲՍՐԳՈՂ. (ԹԻՒՆԻՆ):

Երարատեան ճակատ գաւառին հարաւային սահմանադիւրին սրածայր և բարձրադիր լեռան է Բարդող կոչեցեալ ի պատմագրաց, Երասխայ հարաւային գետեզեր վրա, Երարատեան դաշտի արեւմտեան ծայրը, ուր որ յիշեալ գետը յԱրշարունիք հոսելով, կվերջանայ մեծն Մասիսի շրջապատ դօտին:

Լեռան Բարդող իր արեւմուտքէն ունի Վաղզուան գիւղաքաղաքը Արշարունեաց կամ Երասխաձոր գաւառին ծայրը, իսկ արեւելեան ստորոտին վրա անուանի Վոզպ գիւղը՝ իր աղահանքովը հռչակուած հին և նոր Հայաստան աշխարհքին մէջ, որի վրա իբրև հովանի բաշացած է լեռան իր սրածայր գագաթով:

Սորա հարաւային կողմը՝ որ ինչպէս ասացինք, Բամբակի լեռան է, երկուքին միջոցը իրենց բարձրութեանը մէջ, ընդարձակ հովիտներ կան, ուր որ վրանարնակ Քիւրտերը մեծ բազմութեամբ ամառը կանցնեն, և այն հովասուն տեղերուն Սինակ անուն կտան:

Երկրին մեծ ճանապարհը այս տեղի Երասխայ անցքին վրա է, ուստից երկուց սահմանակից պետութեանց վաճառականութիւնը կրանի առաւելապէս ձմեռ ժամանակ, երբ որ յԱրեւանէն կարաւանը Ղարս և կորին կերթայ:

Այս լայնաբերան խորաձորին մէջն է և խաւնուրդն Ախուրեան գետոյ՝ որ Շիրակայ գաւառէն Ք հիւսիսոյ կիջնէ, և խորին լուծեամբ Երասխը ողջունելով՝ իբրև դաշնակից նորա հետ կմիանայ:

Այս ընդարձակ երկու խորաձորերի կցուրդը դիտող Հայկազուն ճանապարհորդը անշուշտ կերեակայէ Երկրորդն Երուանդայ առաջին երջանիկ վեճակի յիշատակները, որ տեղեոյն անդոյգ և գրեթէ եզական դրիցը վրա սքանչանալով, հիւսիսէն Ախուրեանին վրա իր բազարանը կհիմնէ, և հարաւէն կամ պարզ ևս՝ այս լեռան հիւսիսային աղառած ստորոտին վրա՝ որ անմիջապէս Երասխայ մէջը կիջնէ, կը կառուցանէ Երուանդաշատ զարմանաշէն քաղաք:

Մենք որ Հայաստանի բուն իսկ Թագաւորանիստ գաւառաց լեռները, գետերը առանց անցից պատմութեանց պիտի ստորազրենք ու անցնինք, չենք կարող այս ամեն լեռանց պատմութեանց խորերը մանել, բայց ո՞ր ճանապարհորդը, կասեմ, մեզ նման հրաշիւք այս կցուրդը անցաւ, աչք դարձրուց գետեզեր երկու կողմը բռնող կանգուն և կործան Երուանդի աւերակաց վրա, ու ազի արտասունքով հայրենի կորուստը չլացաւ, կամ նոյն Թագաւորի երջանիկ օրերի հետ միտք չբերաւ նորա Թշուռութիւնն էլ. զոր գտաւ նա իր երջանկութեան յիշատակաց աւերակների մէջ. ուր մանուկն Արտաշեսի սուրը շողաց, ուր հազարապետին Միբատայ ահաւոր ձայնը լեռները թնդացոյց և Երուանդաշատին պարիսպները հիմն ի վեր կործանեցան:

Մենք էլ որ Երասխայ տխուր ու տղմուտ ալքների հետ Երուանդաշատը լացինք ու անցանք, անմոռանալի կանէ մեզ քաղաքի նկարագրական շէնքին հիւսուածքը, փոխ կանոնուն Խորինացիէն շատ սուգ:

Վասն զի թէ որ ծերունի պատմաբանին քաղցր կը լինի Արուանդոյ դաստակերտին համար ասել, որի ախորժակն էլ ծերացած կլինէր, հարկաւ ևս առաւել քաղցր և ախորժական կլինէր զնոյնը պատմել, զոր ինչ զբաժ է Խորենացին Արուանդաշատին գեղեցիկ և չքնաղ շինուածոց վրա. — բայց զայս ասենք ու անցնինք թողլով զայն ի կարգս քաղաքաց :

Այս ամեն լեռները մեծ Մասիսէն մինչև աստ կը ջրապատեն Արարտեան դաշտին հարաւային և արեւմտեան կիսաբաժինը այս ինքն մինչև Ճակատ գաւառին կէս սահմանը ի խառնուրդս Արասիս և Ախուրեան գետոց: Աստի կստորագրենք նորա հիւսիսի երեսէն հանդիպակաց լեռները, որոց մէջն են մեծն Հայաստանի մեր ասած այն մասնաւոր գաւառները, զորոնք մեր խոստացածն են: — Սոցա մէջ մեծ և յիշատակարան անցից պատմութեան և առաջին՝ Արագած լեռուն է *), որ Հայաստանի անթիւ ու անհամար անմահ յիշատակաց սրբազան նշխարները իր հովիտներուն և ծործորներուն մէջը կինամէ, և իր թեւերուն ու լանջերու վրա կանմահացնէ. — յիշատակըք անջնջիւք, որ Հայոց սրբաշէն Տաճարներն են, Աստուածաբնակ վանքերն են, և հազարումէկ ուխտից և սրբութեանց վայրք, որոնք տակաւին դրախտէն հոտ կառնուն, գրախարհ հոտ կտան :

2. ԱՆՍՈՒՆ ԱՐԱՂԱՅՈՒՄ:

Արագած անունը այս լեռանը կտայ Արմենակ Հայկայ որդին, որի համար Խորենացին կը գրէ. « Չլեռուն ա-

նուանէ յանդադոյն յիւր անուն Արագած », . Ա. զիրք. գլ. 11 :

Լեռուն Արագած Արարտեան նահանգին մէջ Շիրակ գաւառին հարաւային սահմանը արեւելքից արեւմուտք Արագածոտն գաւառէն կը կտրէ, ուստից Շիրակայ լեռանց զօտիներին կը կցուի, և իր այս արեւմտեան ոտքը կտարածէ մինչև Ախուրեան գետ. իսկ արեւելեանը կը հատանէ լեռուն Արայի մինչև Հրազդան՝ որ Արագածոտն գաւառը կբաժանէ Արտայց գաւառէն. Արագածու և Արայի լեռանց մէջ տեղէն Վասաղ գետը Նիզ գաւառէն իջնելով՝ ահազին խորածոր կբանայ և կմտնի Արարտեան դաշտը :

Արագած այնպիսի դիրքով Արարտեան դաշտը Շիրակէն կբաժանէ, առաջնոյն հիւսիսային և երկրորդին հարաւային սահմանադրուի կը կանգնի. իր արեւելքը կմնայ Նիզ գաւառը առանձին սահմանով բարձր ծործորի լեռնադաշտի մէջ. իսկ արեւմուտքէն՝ ինչպէս որ ասացինք՝ Արագածոտն գաւառի սահմանադրուի կորոշէ:

Արագած լեռան գագաթը չորս սեպացեալ ոստեր են մէկմէկի դէմ, որոց միջոցը գոգաւոր լինելով, մեծ ջրաժողով կպահեն իրենց բարձրութեանը մէջ ամառ. ձմեռ ձիւնով շրջապատած. արեւելեան ոտէն՝ որ ամենի մեծն է՝ ամառ ժամանակ ծծումբ կծորի, որ ժայռերէն կախուելով՝ հրացանով որսորդները վար կձգեն:

Մեծ ջրաժողով ևս՝ որ արեւմտեան ոտին կողմն է, և ձիւն հալոցներէն ձեւացած է, ինչպէս հին ժամանակ, նոյնպէս և նորումս դեռ ևս Պարսից ժամանակ Արեւանայ Հիւսէին խան սարգարը առու հանեց Բիւրականայ և այլ գիւղօրէից անդաստանների համար:

(*) Արագածը կստուգաբանի արագ ամբ :

Այս երկու լեճերէն կառնու լեռը իր բովանդակ ջրաբաշխութիւնը և իր շրջապատ տեղերուն կտայ, որով և սկանակիտ աղբիւրներ կբղխէ իր ջրվէժներուն մէջ. թող զայս՝ Մեծածորի անհամար ակունքը ի մեծ շամբին, որի համար առանձին:

Հայաստանի մէջ այս լեռնէն օգտակարը չկայ. շատ անգամ Արարատեան սրբազան լեռին փլասները հասած է մեզ, բայց Արագածու բարիքը Արմենակէն մինչև Հայոց յեախն շառաւիղը անմոռանալի է:

Սորա ջրաւէտութիւնը բոլոր լեռը բերրի և պարարտ կը ցուցանէ վերէն մինչ ի վար, իբրև բուրաստան խոտով ու ծաղկով զարդարած, ուր ամառը բոլոր տեղիկան բընակիչքը վրանաբնակ կը շնչեն. Անդէորդականք և խաշնարածք միատեղ՝ Հայ, Պարսիկ և Վիւրաք խուռն բաղմոնութեամբ բաժին բաժին կըռնեն ծործորք, խորածորք և աղբիւրաշատ սիզաւէտ հովիտներ նորա լանջակողմերի վրա, որոնք միշտ տեղափոխութիւն կանեն տարուայ չըսեղանակաց փոփոխութեանը հետ:

Մեր գրչին դովեստը փոքր կհամարուի այսպիսի ամենազովելի լեռան. ալէ՛ մեր մերմանաւը պատմաբանի *) դովեստին գրիչը փոխ առնունք նորա գեղեցկավայր դիրքը նկարագրելու, որ այսպէս կասէ. «Իսկ Արմենակայ միապետեալ զմերազնեայս՝ երթեալ տարեալ դադարեալ բնակէ ի գեղեցկատեսիլ դաշտի միջ. որ իբրև պարսպեալ ի նմանէ բարձրագագաթ սպիտակափառ լեռամբ, յինքն ունելով զգնացս գետոց երագագունից հասելոց անցելոց ընդ երկայնութիւն դաշտին խոխոջելով խոռո-

(*) Յովհաննէս Վաթոյիկոս պատմաբան:

ջացեալ, և ապա զծործորս լեռին հիւսիսոյ շինեալ, յիւր անուն զլեռան յորջորջէ Արագած, »:

Առանց յիշատակելու կանցնինք այն ամեն վանքերը և անապատները, որոնք Արագածու շրջապատը շինուած են. հարաւային ստորտը եղածները Արշակունեաց ժամանակէն, և հիւսիսայինը Բագրատունեաց օրէն մնացած. — բոլորին թուահամարը իւրաքանչիւրոց մէջ:

Է. ՇՐԷՋ. ԲԱՌՈՐ:

Խորենացոյ յիշած առասպելէն յայտնի կերևի Շրէզ բլրոյն տեղը, որ Արարատեան դաշտին մէջն է, Բ. 65, որն որ Արարատի հինգ գաւառաց ստորագիրը անյիշատակ կթողու ի կարգս լեռանց:

Հին Հայաստանի հեղինակը իրանից անձանթ եղած Արարատեան գաւառներու գլուխը Վաղարշապատ և Արտիմէտ քաղաքները յիշելէն ետքը՝ առանց բանին ըստուգութեան կարծիք կանի որ (Եր. 171), այս քաղաքների տեղը Շրէզ բլուրն է եղած, այսպէս ասելով, «Իսկ բլուրն, յոր շինեալ Վաղարշապատ և Արտիմէտ քաղաք, կոչէր Շրէզ, » բայց մենք առասպելէն զխանք որ Արտիմէտ քաղաքը կամ Վաղարշապատ բլուրին վրա շինուած չէր, այլ «Առ Շրէզ բլրաւ, կվկայէ և զԱրտիմէտ քաղաքաւ, » որ ցոյց կտայ թէ քաղաքը բլուրին մերձ եղած է. այլ թէ բլուրը Աւանին Վարդգէսի (Վաղարշապատայ) ո՞ր կողմը՝ յիշատակութիւն չկայ:

Սակայն թէ ո՞ր բլուրն է Վաղարշապատայ մօտերը Շրէզ անունով, հասարակաց վկայութիւնը թողած՝ չենք կարող մեր հմուտ ճանապարհորդի *) կարծեացը

(*) Մեծորդ Դ. Թաղիադեանց:

Տաւանութիւն տալ և ասել նորա հետ, թէ Որչառնէնց ասացեալ կոնդն է Շրէզ բլուրը, երբ որ մինչև հիմա ևս երկրի բնակիչները տակաւին Շրէզի բլուր կ'անաչեն Վաղարշապատայ արեւմուտքը երկու ժամ հեռաւորութեամբ եղած կարմրահող բլուրները յառաջացած Արագածու ստորոտէն ուղղակի դէպ ի հարաւ, ուր կրղխեն Մեծամորի ակունքը, ուստից մերձակայ այլազգ բնակիչները դարնան ժամանակ միշտ բեռներով շրէշ անուն բանջարը կ'ոռովին և Վաղարշապատ ու Արեւան վաճառելու կտանին, վասն զի երկրի ազնիւ բանջարեղինաց մէկն է շրէշը: Հաւանական չէ՞ ուրեմն որ հետեւացնենք թէ այս բլուրների հին Շրէզ անունէն և արդ իսկ յիշեալ բանջարին դիւտը և գործածութիւնը մնացել է արդի բնակչաց մէջ, և բլուրին անունը Շրէշի բլուրներ, հասարակօրէն՝ Վաղարշապատ կոչուած, որ համաձայն առասպելին՝ Վաղարշապատի արեւմուտքէն դէպ ի այս քաղաքը գալու առաջ այս Շրէզ բլուրն է, յետոյ Քասաղ գետ և ապա յիշեալ քաղաքը, որն որ Տուհաց մանուկն շինեց Վարդգէս, և անուանեց Աւան Վարդգէսի: — Ահաւասիկ բլուրներն էլ:

Վաղարշապատ ասացեալ կարմիր միաշար բլուրները առանձին առանձին չորս հատ բլուրներ են իրարու կից, ինչպէս որ ասացինք Վաղարշապատէն երկու ժամ հեռի դէպ յարեւմուտք՝ ինչպէս և Քասաղ գետին:

Այս բլուրները Արագած եռան հարաւային միջավայր ստորոտէն փոքրիկ բազուկի պէս երկարացած մինչև Մեծամոր գետի գլուխը՝ Արարատեան դաշտը Արմաւրայ դաշտէն կրածանէ, և դէպ արեւմուտք գողաւոր ձևով կրտարածուին: — Շատ զուրկ է կանաչութենէ ամառ ժամանակ, միայն գարնանային անձրեաց տարափներով կը-

հասցնէ առատ շրէշ և բոխ բանջարեղէնս ի կերակուր բնակչաց. ձմեռը ոչխարաց հօտեր սոցա գողերի մէջ կմակողեն, հարաւային կողմէն արեւու ուղղահայեցութիւնը իրենց վրա առնելուն համար:

Ը. ԼԵՍՈՒՆ ԱՐԱՅԻ:

Աս լեռան անուանակոչութիւնը առնուած է Շամիրամայ պատերազմէն՝ զոր արար նա զեղեցիկն Արայի հետ. վասն զի կպտամուի, Արայ իր զօրքովը Ասորոց թագուհւոյ դէմ ելնելու ժամանակ՝ այս լեռան ստորոտը բնակեցաւ և այս դէպքից Արայի լեռան ասուեցաւ:

Չայս կհաստատէ և հետեւեալ Շամիրամայ կոչուած լեռան, որ Արայի լեռան հանդէպն է Արայոց զաւառին մէջ, ինչպէս ստորև կը գրենք. երկուքի միջոցը ընդարձակ լեռնադաշտ է տարածուած արեւելքից արեւմուտք. իրաւ որ ասպարէզ պատերազմի, որի ստորոտը ևս Շամիրամայ զօրքը բանակ դնելով, պատերազմի ձակատ յարդարած կը վկայուի:

Այս տեղ ևս հարկ կլինի մեզ շայաստանի շնախօսի տարբեր զրուցուածքը յառաջ բերել այս լեռան համար:

Գանձակեցին Աիրակոս առանց Արայի անցքը յիշելու՝ սորա անունը կտայ լեռան Արայի և տեղը կնշանակէ յԱրագածոտն, երբ որ շեթում թագաւորի համար կասէ, «Չտեղի առ յոտն Արագածու հանդէպ լերին Արայի ի գիւղն որ կոչի Վարդենիս»:

Սակայն այսպիսի ազգային մատենագրի ստուգութեան դէմ ևս կմտախնայ մեր հնախօսը. ինքը միայն անձանօթ լինելով, Աիրակոսի այս բանը յառաջ կբերէ և ջանք կանէ Արայի լեռան ասածը՝ ցոյց տալ լեռան Արարա-

տեան, « թուի լինել ասէ, նոյն իսկ լեռան Արարատեան », *) :

Աթէ արժանյիշատակ պատմիչը իր բանին մէջ այս լեռան տեղը որոշակի չդնէր « յոտն Արագածու », անշուշտ պիտի փոխէր մեր հնախօսը զլեռան Արայի՝ ի լեռորն Արարատեան, և այսպէս Հայաստանէն դուրս եղող մեր հայրենակիցներին հաւատացնել, թէ նախնի մատնադիրը Արարատեան ասիլու տեղ՝ լեռան Արայի ասած է :

Շատ կցաւինք որ Արարատեան հինգ գաւառաց ստորագրութիւնները **) տպուելու ժամանակ, որ մեր ձեռովը կլինէր, Հնախօսութեան հատորները տակաւին առձեռն չունէինք, և թէ ո՛չ՝ նրա մէջ յիշեալ տարբերութիւնները զետեղել ի ժամանակին՝ ազգային պարտք կը համարէինք մեզ, ի սպաս ապագայ մատենագրութեանց և Հայաստանի աշխարհագրական մասերը յուղղութիւն վերածել :

Լեռան Արայի Արագածու արևելեան դօտուոյն վրա է, և Արագածոտն գաւառի՝ հիւսիսային կողմը, որ մինչև Հրազդան գետը կտարածի՝ Նիգ գաւառի հարաւային եզերքէն մինչև Արտայց գաւառի արևմտեան սահմանալըլուխը. Քասաղ գետը Արայի և Արագածու իրարու հետ կցուողը անջրպետելով արևմտեան ստորոտէն կթափի յԱրագածոտն Սաղմոսավանքի մեծ խորածորով, իսկ Արայի լեռան հարաւակողմէն՝ գեղեցիկ և արգաւանդահոգ դաշտն է Աղուարդայ, որ բլրոց մէջ տափարակ հովիտներ

(*) Հնախօս. Ա. հոր եր. 93 :

(**) Ստոր. հինգ գաւառացն Արարատայ ի Յովհ. Եպիսկոպոսէ Ըահխաթունեանց :

են մինչև Օշականայ առապարը կղած : -- Բոլոր Այրարատեան դաշտին մէջ՝ այս դաշտի ցորեանը առաջինն է :

Արայի լեռան շրջապատ ստորոտները բռնած են նոյնպէս սրբաշէն վանքեր, մենաստանք երևելիք՝ Աղուարդայ, Թեղնեաց, Բճնոյ վանքը Հրազդանի խորածորի մէջ. իսկ հարաւակողմը՝ Սաղմոսավանք, Յովհաննավանք և Սերկելի՝ ի հնումն Սիւզի անապատ :

Լեռան դիրքը կոնոնաձև է, բայց ո՛չ աւելի սրածայր. իսկ հիւսիսային և հարաւային երեսէն միապաղաղ դադարէն փոքր ինչ վայր՝ հերձուած ունի դէպ ի վայր ձորացած. հարաւային հերձուածի մէջն է մեր Անուշաւանի 86 երեսի մէջը յիշած Աւափառէ կուսի անուսով գերեզման ասացեալ քարայրը. ուր մեծ բազմութեամբ երկրի բնակիչքը ուխտի կերթան Համբարձման օրը, զոր մէնք կհամարինք Արայի գերեզման ըստ անցից ազգային պատմութեան : Այլազգիք յիշեալ հերձուածէն առնելով, զլեռան Արայի՝ Ղառնը-եառը կանուանեն :

Թ. ԼԵՌԱՆ ԵՍՄԻՐԱՄԱՅ :

Արտայք գաւառին մէջ (Արևանայ մահալ) Գեղամայ լեռանց արևմտեան ստորոտին վրա փոքրիկ բոլորակ լեռան է Շամիրամայ անունով կոչուած Արայի լեռան հանդէպ՝ Արևան քաղաքի հիւսիսակողմը արքունական ճանապարհի վրա :

Արդէն տասցինք որ Շամիրամայ լեռան կոչուեցաւ՝ Եսորեստանի այս թագուհին իր զօրքով նորա տափարակ սարադաշտի վրա Արայի դէմ բանակելուն համար. այս կանոնէք ազգային պատմիչներու տուած տեղեկութեանն :

Եւ ըստ որում Շամիրամայ լերան արեւմտեան հարաւային կողմէն կտարածի Կոտայք գաւառի դաշտը խոտաւէտ և պարարտահող հովիտների մէջ, և անդ են Երզնի և Երամօնս (Երամնու) գեղերը, հաւանական է, որ Երայի փախուստը և անկումն ևս անդ եղաւ. և Երամսոյս բառը հետ զհետէ կրճատուելով, Երամօնս — Երամնու ասուեցաւ: Եյս լեռան տեղացիք կը կոչեն Քիթթան տաղը, վերուստ ի վայր հերկուելուն համար:

Ժ. ԼԵԱՌՆ ԳԵՂԱՄԱՅ:

Ենուն առաւ այս լեռան Գեղամ նահապետէն: Յովհաննէս Կաթողիկոսի ասածին պէս, « Գեղամ չուեալ . . . յեզր ծովակի միոյ և շինեալ անդ գեօղս և դերգաստանըս, ըստ իւր իսկ անուանն զլեռան կոչէ Գեղամ », :

Լեռան Գեղամայ Կոտայք գաւառին արեւելքն է բարձր դիրքով և լայն ստորոտով, երկայնանիստ է հիւսիսի կողմէն և մինչև Գարուայ լեռան հարաւային գօտիներին կհասնի, և ցած ստորոտով նորա հետ կմիանայ, որ Գողթան գաւառին մէջը կմանի:

Գեղամայ լեռան այս հարաւային գօտոյ վրա բարձր լեռներ կան բլուրէ բլուր մէկմէկու աղեալեալ Ազատ գետի արեւելեան ափանց վրա, որոնք Գառնի զիւղաքաղաքին լեռնադաշտերը կը լորեն և գետի ընթացքին հետ դէպ ի Գողթանաց գաւառը կհոնարհին, ու Հայաստանի այս կտորին մէջ բնութեան զարմանալի տեսարանը ցոյց կտան. թերևս սրանցով մեզի հետ դրացի աղբերը ատելի արած են, ինչպէս ասացինք Գեղարդայ վանից նկարագրութեան մէջ *), որ այս լեռան մէկ ծործորի մէջը կը

գտնուի, նոցա ախտաւոր աչքը ի նախանձ շարժելով՝ Հայաստանը ձեռքէ ձեռք յափշտակելու ըլձիւն. վասն զի յիշեալ Գեղամայ լերին շղթայաբլուրքը՝ որոնք Ազատ գետին սղատ ընթացից ձայնը արձագանք կտան և կառնուն, բոլոր բովանդակ բուսամերկ են իբրև ձմերուան մէջ և ամենքն ևս տեսակ տեսակ գունով կփայլին, ոմանք կապոյտ, ոմանք ամպազոյն կանաչախառն, և որ մեծ է նոցա մէջ՝ երկու ծայր սեպացած խալառ ապառաժ միապաղաղ վէմ, դեղնախառն կարմիր գոյնզգոյն կփայլի, որոց շողուն պիծակները արեգական կողմնակի հայեցուածքը վրայ առնելով, ճանապարհորդի աչքը կխտաղեն: — Շատ է սոցա համար Գեղարդայ վանից նկարագրութեան մէջ գրածներս:

Գեղամայ լերին արեւմուտքն է Կոտայք գաւառը. հիւսիսէն սահմանակից է Արարձանուտաց կամ Ծաղկունք գաւառի և Գեղամայ ծովի արեւելքէն, ուր և Գեղարքունի գաւառն է, և Սիւնեաց նահանգին ծայրը, իր հարաւը կայ Աղեգնաձորը Սիւնեաց գաւառներէն մին:

Եյս լեռան ևս մեծ լեռների պէս ի սփիւռս գագաթան իւրոյ իր երկար դրութեան ու ընդարձակութեան մէջ ունի հովիտներ և ջրերի ժողով, որոնք մեծամեծ գետեր կպատճառեն դէպ ի ծովը. սորա գագաթան վրա ևս տեղ տեղ ձիւնը կմնայ ամառ ժամանակ:

Հայաստանի լեռներու մէջ նախնեաց յիշատակարաններով պանծացող մէկն էլ այս է, և ունի իր վրա Այրիվանք՝ Գեղարդայ վանք կոչուածը, Տրդատայ սարաւոյթը, Հաւուց թառ, արեւելեան լանջին վրա՝ վանորայքն Շողադայի, Առնավանու, Մաքենոցայ, Արթավանք ևլն:

(*) Տես Բազմավէպի 1849 ամի հատորը:

Հայաստանի աշխարհագրութիւնը ցոյց կայ, որ լեռ-
 ուն Գեղամայ Հայաստանի Սիւնեաց նահանգին մէջն է.
 բայց նոյն աշխարհագրիւրը, ասել կուզեմ Խորենացին,
 կուսուցանէ մեզ, որ « Սիւնիք յիւր կայ Երարատայ », .
 վասն որոյ և մէք կստորագրենք զայն Երարատեան նահան-
 գի վրա: Եյս լեռուն արեւելքէն կպարսպէ Վարաժնու-
 նեաց գաւառի կէս մասը, Կոտայց գաւառը, Գփնայ և
 Շարուրայ դաշտը, որոնք Եյրարատեան նահանգը կը
 կացուցանեն:

Ե. Այրբաթեան նահանգին բերքը:

Ա. ԵՐԱՍԽ:

Մեծ և անուանի զեռ Հայաստան աշխարհքի մէջ:
 Երմենակայ որդին Երամայիս իր Երաստ կամ Երաստ
 թոռի անունովը այս գետը Երասխ կոչեց, որ զբախտի
 չորս գետերի մէկն է, զոր Սուրբ Գիւրք Գեհն կանուանէ,
 և Խորենացին կհաստատէ Ե. դերք. դ. Ժ.Ե.:

Երասխ մեծն Հայաստանի լեռներէն կըղևի, ուստի
 Եփրատն էլ, և Բասենի մէջէն Երարատեան նահանգը
 անցնելով, կմանի Երարատեան դաշտը Երուանդակերտ
 քաղաքի առջևէն, որ է Բարդուղ լեռան ստորոտը, ինչ-
 պէս որ նորա ստորագրութեան մէջ:

Շատ գետեր իր մէջը կանուա Երասխ՝ ինչպէս են
 Մուրց՝ Բասնու մէջ, Եխուրեան՝ Ճակատք գաւառին
 մէջ, Մեծամօր և Վասաղ՝ Երագածոտան մէջ, Հրազ-
 դան և Ազատ՝ Գփնայ դաշտին մէջ, և Տղմուտ գետը Մա-
 դարթայ լեռին տակ, այս ամեն գետերով Երարատեան
 դաշտէն անցնելով, կմանի Սիւնեաց նահանգը, ուր ըստ
 Յովհ. Աթողիկոսի « թափ անկեալ ընդ նեղ և ընդ

նուրբ խոխոմս քարանձաւի միոյ, որ այժմ, ասէ, ի բաղ-
 մաց Վարաժակ անուանի », կերանէ ապա Փայտակարան
 նահանգի ընդարձակ դաշտը, և անդ իր մէջը առնելով
 Կուր և Որոտնայ գետը՝ կթափի Կասպից ծովը:

Բայ ի արեւմտեան քանի մի գաւառներէ՝ որոց մէջ ա-
 ւելի բարձրէն կընթանայ Երասխ, կբաշխէ ջուր նաև Եր՝
 շարունեաց գաւառին (Սահաթափոս ասացեալ) ի դաշ-
 տավայրս Սուրմարուայ և Երմաւրայ. որոց զիւրերը ա-
 ռանձին առուներ ունին հանած Երասխէն:

Երասխայ հինգ կամըջատեղիքը՝ զոր կյիշէ նոր Ստո-
 րաղիւրը՝ վաղուց շինուած Երարատեան նահանգին մէջ,
 այժմ քակուած են իսպառ. հողիւն շմարանքները կերևին
 յիշեալ կամուրջների, և տեղերն էին ի հնումն՝ Բասե-
 ան, Երուանդակերտ, Երտաշատ, Կախիջեան և հին
 Զուրայ, որոնք իրանց շէն ժամանակը կամուրջ էլ ունե-
 ին Երասխայ վրա:

Բ. ՄՈՒՐՅ:

Մուրց գետը Հասանդալայի ջուրն է. որ արդարև իր
 վոքրիւթեամբը՝ բայց զառ ի վերէ քարավիժ իջնելովը
 մրցելով կմանի Երասխայ մէջ. տեղական բնակիչներէն
 Հասանդալայի ջուր կը կոչուի այժմեան Հասանդալայ ա-
 սացեալ ամրոցի տակէն անցնելուն համար, և սորա ջուրը
 կժողովուի վերին Բասենի մօտագայ լեռներէն, Գարդա-
 բաղար ասուած և գաւառի ուրիշ ջուրերէն. ամեն դեռե-
 րէն աւելի կարճ է սորա ընթացքը, ըստ որում Հասանդա-
 լայի բլուրը՝ որ հիւսիսէն Մուրցը բղտող լեռանց բազուկն
 է յառաջացած դէպ ի դաշտը ի հարաւ: Երասխը շատ
 մերձ կանցնի բլուրի տակից, ուր է և Մուրց գետին խառ-
 նուրդը:

Այս խառնուրդին մօտ եղած ի հնուսն էր Վաղարշա-
 ւան քաղաքը, զոր շինեց Վաղարշ ի յիշատակ ծննդեան
 իւրոյ որ անդ դիպաւ. գուցէ այժմեան Հասանդալայն ի վե-
 րայ բլրոյն, Վեառն Ծիրանեաց ասացեալ ի պատմագրաց,
 որոյ վրայ եղած հին և լեռնածայր օձապտոյտ ամրոցը,
 Հայկական ձեռքից ելած ցոյց կտայ: — Մենք մեր դի-
 պուածով ճանապարհորդութեան ժամանակը երբ քանի
 մի շաբաթ հիւր եղանք Սարմիր վանքը՝ որ Ծիրանեաց
 լեռան արևելեան լանջին վրա է Օկոուրի գիւղի հանդէպ,
 ամրոցն էլ լեռան հարաւէն արևմուտք պատած լինելով
 հանդերձ այժմու Հասանդալայ գիւղիւ, լաւ դննեցինք
 ամրոցը, ուստի և ամեն ականատես մեզ հետ սորա հնու-
 թիւնէն կվկայէ հին Վաղարշաւանը այս լինել՝ որ մերձ է
 Արասխայ և Մուրց գետերի խառնուրդին, ոչ լինելով և
 քառորդ ժամի ճանապարհ, քան թէ Հին Հայաստանի
 ցոյց տուածը, որ պատմագրաց « ի խառնուրդս », ասելով,
 խառնել է Վաղարշաւանայ տեղը, դնելով զայն այժ-
 մեան Վէօփրի-քեօյի ասացեալ տեղը յեր. 385. ուր որ
 ինչպէս Արասխայ ստորագրութեան մէջը յիշեցինք, կա-
 մուրջն է նոյն Արասխայ վրա և ոչ Վաղարշաւան քա-
 ղաքը:

Գ. Ա.ՆՈՒՐԵԱՆ:

Ախուրեան գետը Շիրակայ դաւառին մէջը առաջին
 լինելով, երկու վտակէ կսկզբնաւորի. առաջինը հիւսիսա-
 յին Բասսնի անտառախիտ լեռներէն, որ Սարս քաղա-
 քէն անցնելով, կխտորի դէպ ի Շիրակայ արևելքը, իսկ
 միւսը հիւսիսի կողմէն Գարուայ անուն լճակէն յառաջե-
 լով (զոր այլագրէք Արփա-չայը կը կոչեն) Ախուրի արև-
 մտեան քովէն կանցնի ու կմիանայ առաջինի հետ Վա-

ղարապատ գիւղի յառաջը, Չրփրլու և Աստախան գեղե-
 րի մօտ բարձրակառոյց և կամարակապ կամուրջ՝ տակէն
 անցնելով, ընդ որ Անի քաղաքի մեծ ճանապարհն էր ի
 հնուսն, կիջանէ ուղղակի դէպ ի հարաւ նոյն քաղաքի
 տակէն, և Բագարանի ներքև դուրս դալով ճակատ գա-
 ւառի սահմանադրուելը, Արուանդակերտի յառաջը կը-
 թափի յԱրասխ՝ զարմանալի տեսարան գործելով երկու
 գետափանց բնական գեղեցիկ դրեց մէջ:

Ախուրեան գետոյ ինչպէս միւսերին ևս, պատմական
 տեղիկութիւնքը կթողունք գրաբառին մէջ, յոյս ունե-
 նալով զայն ևս առանձին զբքով ժամանակին տալ իւրոյս:

Գ. Ռ.Ա. ԳԵՏ:

Ռաս հետ կյիշէ Աորիւն Մեսրովայ գործոց պատմա-
 գիրը իբր յԱյրարատեան դաշտին մէջ, յասնին, « Պա-
 տահէին Արանելոյն (Մեսրովայ) զափամբ Ռաս գե-
 տոյն », . աստի կվստահանայ Հայաստանի հնախօսը Ռաս
 գետը դնել Արարատեան դաշտին մէջ, ուստի և կհե-
 տեացնէ որ Վաղարշապատայ մօտէն կանցնի. բայց ո՛չ
 Վաղարշապատայ մօտ և ո՛չ Արարատեան դաշտին մէջ
 չինք տեսնել ուրիշ որ և իցէ գետ՝ որ կամ Ռաս անուն
 ունենայ, կամ գէթ հին ժամանակից այս անուամբ կո-
 չուած լինի այլ պատմագիրներէն. վասն զի Արարա-
 տեան դաշտի բոլոր գետերն էլ ի հնուց յատուկ ա-
 նուն ունին. բայց որովհետև Ռաս անունով կյիշէ Աո-
 րիւն մերձ Վաղարշապատայ, հաւանական կերևի մեզ
 թէ նոյն իսկ Վասաղ գետը կը կոչուէր Ռաս գետ, կամ
 Ռասի գետ, որ արդարև Վաղարշապատէն քառորդ
 ժամ միայն հեռի՝ մեծ Ռասի մէջէն կանցնի, այն Ռասը՝
 որ կերթայ մինչև Աարին:

Իսկ նոր ճանապարհորդներէ ունաք՝ որ Ռաս գետը Շիրակ գաւառը կրնեն, ամենեին անտեղի է և չի վերաբերիլ այն Արնոյ գրուածքին, ուր Ռաս գետը կրնէ մերձ Վաղարշապատայ և ոչ երկու աւուր ճանապարհ հետի: — Այլ թէ ի Շիրակ կայ ևս Ռաս գետ, նորա համար չէ Արնոյ գրուածը:

Ե. ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏ:

Մեծամօր կամ Մեծամօրի գետը (հասարակօրէն Աւջուր) կսկիւնաւորի Մեծամօրի լճակի աղբերակներէն, որ Քասաղ գետի արեւմուտքն է, Շրէղ աստցեալ բլուրների տակը. այս աղբերակունքը ընդարձակուած լինելով մինչև Աւրգապատ գիւղ՝ կը կացուցանեն Մեծամօրի Եղեգնուտ ու խոտաւէտ և ձախնային շամբը, ուստից Մեծամօրը կյառաջանայ զանազան վտակներով:

Այս գետը Վաղարշապատայ արեւմտեան կողմն է երկու ժամու գրեթէ հեռաւորութեամբ. ուստի յառաջանալով դէպ ի հարաւ նորա, անդ կառնու իր մէջը ըզ-Քասաղ գետ, և այս խառնուրդէն բաւական ներքև կը թափի Ղարասի Երտաշատ քաղաքէն շատ հեռու դէպ յարեւմուտս նորա:

Որքան որ կարճ է Մեծամօրի ընթացքը, այնքան ևս իր ակներէն մինչև իր խառնուրդը Ղարասիայ հետ՝ բոլորովն շամբի մէջէ կանցնի ձախնային եղերքով, ուր որ այսահար կթափառէր երբեմն ահեղագորն Տրգատ. որու մէջ և արդ իսկ վայրենի կինձեր կորսան գիշերը և ցերեկը ամենացեղ թռչունք ջրայինք. ձմեռ ժամանակ ասպնջական է Մեծամօր գրեթէ մեր աշխարհքի բոլոր ջրային թռչնոց. ուստի որսորդք որսալով ամեն տեսակ ձկներ՝ կվաճառեն Ղարևան և ի Վաղարշապատ:

Հին կամրջատեղին՝ զոր կյիշատակէ Եգաթանգեղոս, տակաւին ևս կերելի Մեծամօրի վրա, ուր որ Քասաղ գետի հետ կը խառնուի, և անդ արդարև « Ընդ դուրսն հարաւոյք աղաքին Վաղարշապատայ », որու վրա ջուրը նուազած ժամանակին՝ երկրի բնակիչքը գերան կձգեն կանցնեն:

Մեծ բարեաց պատճառ է Մեծամօր երկրի բնակչացը ջրոյ պակասութեան ժամանակ՝ առատ ջուր տալով անդաստանաց, և եղէգն ու խոտ բերելով նոցա շատ, անթիւ և մեծամեծ ձկներ և թռչուններ ի կերակուր:

Զ. ԾՈՎԱԿ (ԼՃԱԿ) ՄԵԾԱՄՈՐԻ:

Այս ծովակը պատմադիրք կրնեն մօտ յԱրմաւիրն. Շրէղ բլրոյն տակն է, որ նոյնպէս Վաղարշապատայ արեւմուտքը լինելով, Մեծամօր գետի աղբերակները սորանից կրդխին, և ինքն էլ ջուր կառնու ստորերկրեայ հաղորդակցութեամբ Երագած լեռան զլուխը եղած մեծ լճէն, և այս հաղորդակցութիւնը յայտնի կանէ Աուաշ աւանը եղած ստորերկրեայ մեծահնչիւն ջրոց խոխոջիւնը. որ Երագածու հարաւային լանջին վրա է, և ուղղակի կհայի Մեծամօրի այս լճակին վրա Շրէղ բլուրների երկարութեամբ:

Այս լճակի դիրքէն ևս յայտնի կերելի՝ որ ապառաժ և անջուր բլուրների մէջ է. ո՛չ ջուր կանցնի և ո՛չ աղբերակներ կան սորա մերձակայքը. բայց միշտ անդակաս կմնայ առանց նուազելու և ամառուան շոգ ժամանակը, շատ հանդարտ, վճիտ ու խոր է ջուրը:

Բոլորադիժ է լճակի դիրքը և բարձր քան զՄեծամօրի ակունքը. լճակի հիւսիսային ծայրը բլուրի բարձր ապառաժըն է՝ ընդ որ անհնար է անցնել. իսկ հարաւային շրջա-

պատ եղերքը բաւական ընդարձակ եղեգնուտ է և ճախ-
ճախուտ :

Շատ վտանգաւոր է մարդոց շրջել այս եղեգնուտը,
լճակին շրջապատը հազիւ մէկ ժամու միջոց կայ :

Ընդ մէջ լճակին և Մեծամորի ականց՝ ինչպէս որ ա-
սած ենք, արքունի ճանապարհն է, որ Արևանէն կհա-
նէ ի Սարտարապատ. նոյն ճանապարհի վրա լճակին ու
գետի միջոցը քարուկիր իջեաններ շինեցին Ռուսք Ղա-
ղախաց բնակութեան համար. ուր որ այս երկիրը առնէին
մինչև 1848 թիւը՝ նոցա պահապան գունդը կնստէին սահ-
մանադու խնների համար. ուստի փոփոխակի պահապան
կերթային Ախուրեան գետի եղերքը. բայց յիշեալ թուա-
կանին խապառ փոխադրուեցին աստի Պարսից սահմանա-
դու խը դէպ Նախիջևան՝ այս բնակարաններուն քանի մի
պահապան թողլով : — Սորա փոքրիկ նաւակներով կպտը-
տեն լճակին և Մեծամորի մէջ և կորսան առատ ձուկն :

• Է. ՔԱՍԱՂ ԳԵՏ :

Քասաղ գետը կելանէ Նիզ գաւառէն, պաշ Ապարան
ասացեալ (ի հնումն Քասաղ գիւղ) գիւղի տակը եղած
բազմաթիւ աղբիւրներէն, որոնք Արագած լեռան ստորո-
տէն կբղխին, շրջակայ լեռնոտներէն մանր վտակներ իր
մէջը առնելով, հիւսիսէն կիջանէ դէպ ի հարաւ : Արայի
լեռան արևմտեան ստորոտէն իջնելով կմտնի Արագածոտն
գաւառ Սաղմոսավանքի խորածորը, անտի զառ ի վայր
կթափի յԱրարատեան դաշտ, ընդ մէջ Աղարշապատայ
և Մեծամորի անցնելով՝ կթափի ինոյն Մեծամոր :

Սաղմոսավանքի բարձրաւանդակէն մինչև Մեծամոր՝
ուր որ է Քասաղայ խառնուրդը, բոլոր գիւղերը առան-
ձին ջրանցքներով ջուր կառնուն Քասաղէն, և երկրի

պտղաբերութեան և այգեւէտութեան պատճառը այս գե-
տը միայն է,

Քասաղ գետը կ'ըստանայ առաւել դարնան մէջ
ձեան ու անձրեաց հեղեղներէն, որ Արագած լեռնէն և բո-
լոր շրջականերից կիջնեն, և այս ժամանակ շատ վնաս կը-
տայ դաշտավայր գեղերին, կքակէ ձորամէջ եղած ջրան-
ցից թուփերը ու ջրաղացները, ինչպէս են Օշականայ,
Աշտարակայ և այլոց, որոնք առ հարկի յորձանքների
բերանը կշնուին գետափուները նեղ լինելու պատճառաւ :

Բայց վնասներէն կրկնապատիկ աւելի օգուտ կբերէ յի-
շեալ գեղերին և բոլոր Արագածոտն գաւառին, որու մէ-
ջէն կանցնի :

Մեծ ջրանցք բացած են նախնի Աթուղիկոսք Քա-
սաղ գետէն դէպ ի Աղարշապատ, և յատկապէս Աթո-
ռամայր Ակեղեցու պիտոյիցը օգնելու, և անցքն է Յը-
ռանկանոց ասացեալ գիւղէն վեր, ուր որ գետը ձորէն
դաշտը մանելով, Արարատեան դաշտի առունները կբաշ-
խուի և պարարտահող երկիրը պտղաբեր կանէ հարիւրա-
ւոր գեղերի համար :

Աղարշապատայ մասին ջրանցքը բաժնուելով դէպ
արևելակողմն, Մոլլայ-ղուբսըն գիւղի յառաջը երկու
ձիւղ կբաժնուի դարձեալ, մին այգիները կերթայ, միւսը
ուղղակի կմտնէ Աղարշապատ գիւղին մէջ բնակչաց և
վանքի գործարանները դարձնելու :

Այսաստանի այս գաւառները ընդհանրապէս չօրային
լինելով, ամառը շատ կնուաղի Քասաղ գետն էլ, մա-
նաւանդ երբ որ ձիւնը կվերջանայ լեռանց վրայէն և անձ-
րեաց տարափը կգազարի Մայիսի վերջերը. բոլոր երկրի
ապաւէն կլնի Քասաղի աղբիւրականց վտակները մի-
այն, որոնք հազիւ այգիների և յարբուսն ժաղովրդոց կը-

բաշխուին, իսկ վարուցանի և անդաստանաց շատ դժուարաւ. ջրանցքներն վրա ուր որ դաշտը կ'ընթացէր Վասաղ, Արքունական Աստուածաբաններէն ջրաբաշխի կ'ընդունին բերքերը կարգաւ ուղղել տալու համար: — Այս երկրի սովորութիւնն է:

Վասաղ գետի վրա հոյակապ կամուրջներ կան Աշտարակ և Օշական գեղերի ձորամէջը, որոնք շատ ամուր և բարձրակամար շէնքերով աւելի զարմանք կ'երբեն:

Բաց յայս երկուքից՝ կոփածոյ և բազմականի կամուրջ մի ևս ունէր Վասաղ Աղարշապատոյ հիւսիսային արևմտեան կողմը: Այս կամուրջը որ մեծութեամբ երևելի էր յիշեալ երկու կամուրջներից և Օսմանցուց ժամանակէ շինուած, թէև մեր օրերն էլ կէս մի մնացեալ էր ամայացած, սակայն մեծ մասը երեք աչքով տակաւին անխախտ էր, և դարնան ջրի մակընթացութեան ժամանակ գետի մեծ ձիւղը նորա տակէն կանցնէր. 1837 թուականին ազգային հնութեան յարգը չէ ճանաչող անձանց շահասիրութիւնը շարժեց այս դարաւոր յիշատակը իր կոփածոյ և սրբատաշ անկիւնաքարերի վրա, որոնք կամուրջին կամորայարկերը քակելով՝ քարերը տարան, և այնպիսի հնութեան նշնարքը իր աւերակաց մոխրին վրա նստուցին:

Սորա վրա յիշատակութիւն չլինելով Արարատեան հինգ գաւառի *) Ստորագրութեանը մէջ, մեր ժամանակի մնացորդը այսպէս կատրագրինք:

Այս կամուրջը շինուած է այն ճանապարհին վրա՝ ուստի յիշեալ տեղէն կանցնեն Արագածոտն գաւառի բոլոր դաշտային գիւղերը մինչև ի Միւսրին Շերակայ:

(*) Ստորագր. Յովհ. Եպիսկոպոսի Շահաթունեան:

Մինչև 1833 թիւը ամբողջ էր կամուրջը, բայց արդէն ջուրը խոտորել էր իր ընթացքը. որու արևմտեան կողմը աւելի ցած լինելով, հետզհետէ ջուրը շեղվելով. սկսաւ խախտիլ կամուրջի հիմունքը. հինգ կամար ունէր, միջինը ամենէն բարձր. այս կամարի բարձրութեան մէջը երկու կողմը մէկ մէկ սենեակներ ունէր. արդէն երկու ծայրի կամարները տապալել էին դարնան հեղեղները երբ որ յիշեալ թուականին սալայարկերը քակեցին. հիմա աւագուկիր զանգուածը դեռ երկու կամար կապած՝ կներկայացնեն կամրջի շէնքին մնացորդը:

Այս կամուրջի շինութիւնը եղած է Օսմանեանց Արևանայ երկրին տիրապետութեան ժամանակ Պահրատ անուն փաշայի ժամանակ վեշտասաներորդ դարու մէջ՝ երբ որ նա կառուցել է Արևանայ բերդը: — Այս կամրջի յիշատակը մնալու համար միայն ստորագրեցինք, ըստ որում գրածիս այժմ քառորդ մասը միայն կերև:

Ը. ՀՐԱՋԴԱՆ:

Արևանայ գետն է՝ զոր Մովսէս Խորենացին կ'յիշէ Արարատեան նահանգին մէջ և երկու վտակէ կ'յառաջանայ, որոց մին կ'ընդունէ Նիգ գաւառի արևելեան լեռներէն, որոնք Պղնձահանք կը կոչուին, և Արաբհունեաց գաւառը կ'հոսի. միւսը կ'ելանէ Արևանայ ձովակէն Զամաքաբերդի յառաջը և կ'միանայ առաջնոյ հետ Բունտամալ գիւղի մօտ ծաղկաւէտ ձորերի մէջ: Աստի կ'ստորի դէպ ի հարաւ, Արաբուաց մենաստանի և Բձնոյ յառաջը մեծ զառ ի վայրէ կ'ընթացի. իր ասեղաձայն խոխոններովը այնպէս քարի հետ կ'ուռելով կանցնի, որ կարծես թէ արդարեւ հուր կազդէ և իր անունը այս տեղից առած կերևի՝ Հրազդան. աստի կ'մտնի Արատայց գաւառը, և

Արևանայ արևմտեան ձորէն անցնելով դուրս կգայ դաշտը, ուր երկրացւոց անդաստանացը ջուր տալով, Արարատեան դաշտի արևելեան ծայրէն կթափի յԱրասխ, Ազատ և Մեծամօր գետոց խառնուելի մէջ տեղէն :

Այս գետին բարեբերութիւնը երկրի բնակչաց համար առաւելագէս յիշեալ դաշտերի մէջն է, որ ամառ ժամանակն էլ իր ընթացքը չի նուաղելով, առատ պտղաբերութիւն կտայ ամենայն սերմանց և այգեաց ու բրնձի, որ ամենէն շատ են :

Մեծ կամուրջ ունի Արևանայ քաղաքին տակ բերդի արևմտեան կողմն, ուստից էր Պարսից խաների պալատին երեսը, որ և մինչև հիմա նոյն դիրքն ունի :

Յամին 1679 այս կամուրջը քակուեց յերկրաշարժութենէ, բայց վերստին շինուեցաւ քաղաքի բերդին հետ կոփածոյ քարից չորս կամարայարկով : — Հին կամուրջատեղին փոքր ինչ սորանից վեր է Չորագիւղ ասացեալ արուարձանին յառաջը, որոց տուները ուղղակի գետափանց վրա շինուած են :

Թ. Ա.ՁԱՏ ԳԵՏ :

Ազատ գետի այս անուանակոչութիւնը առնուած է թերևս գետի ազատ ընթացքէն՝ որ Վեղամայ լեռներէն սկզբնաւորելով, Այրիվանաց դառ ի վայրէն խոխոջածայն կվազէ. Վեղամայ լեռանց հանքաբլուրները ողջունելով, կիջնէ Վիլայ դաշտը, ուր բոլոր զիւղօրայքը լեռցնելով ի պարարտութիւն բերոց, կթափի յԱրասխ, շրագրանէն բաւական հեռի դէպ յարևելս, Խորվիրապայ վանքին մօտ :

Այս գետի համար է ասելն Բիւզանդայ, « մինչև ի դաշտն Մեծամօրի՝ որ անուանեալ կոչի Վիլն », փոխա-

նակ ասելոյ մինչև ի դաշտն Վիլայ. այս անտեղի գրուածովն է, որ պատճառ է տուել շայաստանի Հնախօսութեան հեղինակին Ազատ գետը խառնել Մեծամօրի հետ, որու համար արդէն գրեցինք ի գետն Մեծամօրի :

Զ. Արարատեան նահանգի Արաքածոտն գետուր :

Ազգային մատենագիրը չեն որոշել Արաքածոտն գաւառի հարաւային սահմանադրուիսը Վաղարշապատ քաղաքի կողմէն. ըստ որում նոյն քաղաքատեղին ևս հանդերձ իր դիւր և ընդարձակ շրջապատովը Արարատեան դաշտ ասացեալն է ի դիրս. որու հիւսիսային մասն՝ ընդ որ Արասխ կանցնի, Արաքածոտն գաւառին մէջն է, ուր է Վաղարշապատ. բայց ինչպէս այս գաւառի դիրքը ցոյց կտայ, նոյն իսկ Արասխ գետը հարաւային սահմանադրուի է Արաքածոտն գաւառի, որովհետև Արասխայ հարաւային Ազերբէյ կոչի Արշարունիք և Մասեացոտն գաւառները, արևմտից՝ Ախուրեան գետը, և յարևելից՝ շրագրան, որ Կոտայք գաւառը կբաժանէ Արաքածոտն գաւառէն :

Այս պատճառաւ և մենք նոյն Արասխ գետը Արաքածոտն գաւառին սահմանադրուիս գնելով, որ Արշարունիք կբաժանէ Արարատեան դաշտէն, բոլոր գետի հիւսիսակողմ եղած զիւղ ու քաղաքները՝ որք մինչև Արաքած լեռն կընդարձակուին, նոյն գաւառին մէջ կհամարինք ինչպէս և Խորենացին կակնարկէ, և այսպէս կսորազրենք զայն ըստ ներկայ գրութեան :

Մեր նախնի շայկազուն նահապետներէն Արմենակ շայկայ որդին շայաստանը միապետելով իբրև հայրենի ժառանգութիւն, հօր մահուանէն ետքը կդառնայ դէպ ի հիւսիսային արևելք ընդարձակ դաշտ մի, որ բարձրա-

բերձ լիռներով պատած, մէջէն կանցնէր զեռ արեմուտքէն արեւելք. ուղղակի դաշտի երկայնութեամբը զետը անցնելով կերթայ հիւսիսային կողմը լեռան ստորոտի տակ, ուր որ կարկաջասահ աղբիւրներ կրղնէին լեռնէն դէպ ի վայր, անդ կշինէ բնակութիւն, լեռան իր անուանը յարմարացնելով, Երագած կանուանէ, և իր բռնած կալուածն էլ՝ ոտն Երագածու, ինչպէս Խորենացին կվկայէ. « յայտմ խորութեան դաշտի բնակեալ Երմենակայ, շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լեռինն ի նոյն կողմանէ, և զլեռան անուանէ յանգագոյն յիւր անուն Երագած, և զկալուածսն՝ ոտն Երագածու, » .
Ն. զիրք. զԼ. ԺԲ. :

Երմենակայ վախճանէն յետքը այս տեղս երկրին հետ կպայազատէ նորա որդին Երամայիս :

Իսկ Երագածոտն գաւառին դաշտը, զոր պատմագիրք նոյն հոմանուն լեռին ստորոտը կ'ընշատակեն, ուր Երմենակ բնակեցաւ, բարձրագագաթ սպիտակափառ լիռներով շրջապատուած, երազընթաց զետեր իր մէջէն կվազին, յիրաւի յիշատակեալ լեռին տակն է, և սորա յառաջը հարաւոյ կողմէն այն բլուրը կայ, ուր որ Երամայիս Երմաւիր քաղաքը շինեց. — Ն.յս դաշտը Երագած լեռան յառաջէն կերկարի դէպ արեմուտք մինչև յԱրասիս և Նիուրեան զետերի ափունքը, մինչև հիմա էլ երկրի բնակիչներէն Երմաւրա-տուղ կրկոչուի Տաճկական հնչմամբ. — որ է դաշտ Երմաւրայ: — Ն.յս է Երագածոտն գաւառին աշխարհագրական զիրքը :

Նորարատայ այս Երագածոտն գաւառը Ամատունեաց նախարարութեան սեպհական երկիրն էր, որոց սերունդը թէ ի՞նչ տեղէ յառաջ եկաւ, տեղւոյս զործ չէ. միայն այս յառաջ կրեբնէք, թէ այս նախարարութիւնը՝ Խորե-

նացոյ ասածին պէս՝ « Պատուին յԱրտաշիսէ զիւզիւք և դաստակերտօք և անուանին Ամատունիք, որպէս թէ եկք, և կէսք ի պարսից Մանաւեանս զնոսա անուանեն յանուն նախնւոյն, » (*) որ ժամանակ որ սոցա ցեղը Բրդ Երտաշէսի մօտ եկան, և սորանք Հայոց նախարարութեան թիւը կարգեց Ամատունիք կոչելով զնոսա :

Բայց Խորենացին չի յիշատակեր թէ Ամատունեաց նախարարութեանը տուած զիւզ ու դաստակերտները Երագածոտն գաւառին մէջն էին 120 Փրկչական թուին, երբ որ նոքա Երտաշիսի մօտն եկան. ուստի յայտնի է թէ սոցա զպատենէն յառաջ՝ յիշեալ գաւառը կամ ուրիշ նախարարաց ձեռք էր Հայկազանց սերունդէն, որոց այս երկիրը սեպհական էր, և կամ նոցա տոհմը սպառելով՝ Երագածոտն գաւառը արքունի կալուած էր այն ժամանակ, երբ տուաւ զայն Երտաշէս Ամատունեաց տոհմին. ապա թէ ո՛չ՝ կարենք ասել որ Երտաշէս եթէ բռնի յափշտակէր զայն ու Ամատունեաց տոհմին տար, անշուշտ վեճ կլինէր երկրի կալուածատերերէն, և այս էլ անհնարին էր թէ պատմագիրք զանց առնէին յիշելու, ինչպէս որ Բագրատունեաց օրովը կտեսնենք, երբ որ Գագիկ Երծրունի Սմբատ թագաւորէն ապստամբեց Նախիջևան քաղաքը ձեռքէն յափշտակելուն համար, զոր Երծրունին Վասպուրականի մէջ հայրենի ժառանգութիւն ունէր, զոր և տուաւ Սմբատ Գագիկայ քրոջ մարդուն Սմբատ Նախարարին Ախսակեանց յամին 908 :

Երագածոտն գաւառի Ամատունեաց նախարարութեանը սեպհական ժառանգութիւն լինելու ստուգութիւնը՝ նոյն գաւառի Նպխիկոպոսաց յիշատակութիւն-

(*) Խոր Բ. զիրք, զԼ. ԾԵ. :

ներէն էլ կառնուէք, որոնք որ Առաջնորդութեամբ սուրբ
Պարապետի վանքը կնստէին, որ յետոյ Յովհաննավանք
կոչուեցաւ :

Նոյն վանքի Նպիսկոպոսներէն կ'իշխուի Ջաքարիա
առաջնորդ և վանքը Ամատունեաց անուամբ ըստ յիշա-
տակարանիս. « Ես Ջաքարիա ի տանէս Արարատեան
. . . Առաջնորդ Ամատունեաց սուրբ Պարապետիս որ ի
ստորոտս Արագածու », . . . աստի ևս կերևի Արագածոտն
գաւառի Ամատունեաց տոհմին կալուած լինելը. ըստ
որում ազգային պատմութիւնը ևս աւելի կհաստատէ
զայս: — Օշական զիւղը (որ Արագածոտին մէջն է) Վա-
հան Ամատունեոյն տուած էր Փոքրն Խոսրով ի ժառան-
գութիւն իր քաջագործութեանը պարգև, զոր հիւսիսա-
կանաց դէմ արաւ՝ երբ որ Տրդատայ օրէն արևելեան
գնդին զօրավարն էր յամին 321, ինչպէս յետոյ ևս Մե-
ծին Սահակայ օրովը հազարապետ եղաւ: Այս ամենից
կատնուի որ Ամատունեաց տոհմին գործքերը կ'իշխա-
տուին միշտ Արագածոտն գաւառին մէջ. ուստի և կհաս-
տատուի որ Արագածոտն գաւառը յիշեալ տոհմին կա-
լուած էր. թո՛ղ զի և մեր ժամանակն էլ Վահան Ամա-
տունեոյ պալատին տեղը կերևի Օշականայ արևելքը Վա-
սաղ գետի բարձրաւանդակ հայեցուածքին վրա՝ ուր և
նորա գերեզմանն է թարգմանչին Մեսրովբայ Նկեղեցոյն
պարիսպը :

Իսկ Վահան Մամիկոնեանի ժամանակը, ինչպէս պատ-
մութեան ընթացքը ցոյց կտայ, Ամատունեաց նախարա-
րութեան տոհմը վերջացած էր, և Արագածոտն գաւառն
էլ նոցա պայազատութենէն ելած՝ Գրիգոր Մամիկոնեա-
նի իշխանութեան տակն էր. վասն զի յիշատակեալդ
Վահան Մամիկոնեան իր Վասակ կղբօր որդին՝ Գրի-

գոր Մամիկոնեան Պարսից հրամանաւ իշխան կը կարգէ
Ներսիսաձոր գաւառին մէջ Ապոյոտ ամրոցին մերձակայ
գաւառացը տէրութիւն անելու յամին 486. սորա տոհ-
մէն Գրիգոր Մամիկոնեան Համազասպայ եղբայրը՝ որ
Գամասիոս պատանդ էր, նախարարաց միջնորդութեամբ
ազատուելով և Մաւի անունով Ամիրապետէն Պատր-
կութիւն առնելով յամին 659, կըզայ Հայաստան, և
յաջորդ տարին նոյն Արագածոտն գաւառի Արուճ աւա-
նին մէջ, ուր որ իր բնակութիւնն էր, փառաւոր Նկեղեցի
կշինէ, և իր բնակութիւնն էլ Նկեղեցոյ հարաւային
կողմը կոփածոյ քարով կը կառուցանէ :

Բազրատունեաց ժամանակը այս գաւառը յարքունիս
էր գրաւեալ. տասներորդ դարու մէջ յամին 995, Վար-
գան այսպէս կվկայէ. « Մեռաւ Գագիկ, տուեալ զթա-
գաւորութիւնն երկից որդւոց իւրոց . . . զթագն տայ
Յովհաննիսի, զՆնի և զՇիրակ, զսուրբն Գրիգոր ձորովը
Աշոցաց, և զԱնբերդ և զդաշտն Արարատեան », :

Ըստ այսմ Անբերդ և Արարատեան դաշտը Արագա-
ծոտն գաւառի մէջ լինելով, յորոց և առաջինը իսկ, որ
Արագած լեռան վրայ է, յայտնի է ուրեմն որ Բազրա-
տունեաց այս ժամանակին՝ իսպառ բարձուած էր Ամա-
տունեաց տոհմը՝ և գաւառը տէրութեան ձեռքն էր. զոր
Գագիկ կտայ իր որդւոյն:

Բայց 1217 թուականին և փոքր մի յառաջ Ռու-
բենեանց օրովը Արագածոտն գաւառը Ջաքարիա սպա-
տալարին ձեռքն էր և իր քեռայրն Վահէ իշխան վերա-
կացու կարգել էր Արագածոտն և Ներսիսաձոր գաւառ-
ների վրա. որոց միջև Պարսից ժամանակներից աւերուած
վանքերը նորոգեց, քանի մի հատն էլ նոր շինեց. վասն
զի այս գաւառը ինչպէս ուրիշներն էլ, պատերազմով ա-

ուսւ Ջաքարիա Պարսիկներէն յամի 1169, Վարդանայ
զրաճին պէս. բայց Արախոս պատմիչ բացայայտ կգրէ,
“ Եւին, ասէ իշխանքն Ջաքարիա և Իվանէ ի Պար-
սից և ի Տաճկաց զԻճնի քաղաք, և զԱնբերդ և զԱնի, ”

Բայց այս գաւառը որ յետին ժամանակները գաւառ
Արբբւոյ և Անբերդու կը կոչուէր, պատճառը այն է՝ որ
Արբբի գիւղը այս միջոց բաղմամարդութեամբ քաղաք
դարձած էր, և Անբերդն էլ մենաստան դառնալով, գա-
ւառի եպիսկոպոսը անդ կնստէր ապահով և անառիկ լի-
նելոյն համար Պարսից ասպատակութենէն :

Ինչպէս որ ասացինք, Արագածոտն գաւառը իրեն հո-
մանուն Արագած լեռան իր մէջ ունելով, շատ ականա-
կիտ ալքիւրներ կվազեցնէ. որովք երկիրը բարեբեր կանէ
և բնակիչքը կլեացնէ, որոնք ի հնուամ որ բազմութիւ էին,
Պարսից արշաւանքներէ յառաջ Հայաբնակ էին. բայց
այժմ շատ Մահմեականներ բնակելով, նախնեաց վան-
քերից շատն էլ ըստ ամայութեան՝ նոցա անասնոց ու
օջիսարացը փարսխ դարձած է, ինչպէս են Վարիգորի Մա-
միկոնեան շինած ամենէն հին ու հոյակապ կաթուղիկէ
Ակեղեցին Արուճ աւանից (այժմ Թալիշ) մէջ յեօթ-
ներորդ դարում ի 671 ամի. այս կաթուղիկէ *) Վաղար-
շապատայ Աթուղիկէ եկեղեցիէն երրորդ մասամբ մեծ է և
հոյակապ: Ոչնոյ սուրբ Սարգիսը ‘Ներսէս Շինողի օրէն’
Մահմեականներէ ձեռքն է այժմ հանդերձ Ուշի գիւղը-
վըն: Անբերդու վանքը՝ որ Վաչէ իշխանի և իւր կնոջ

(*) Արուճ աւանի կաթուղիկէ Եկեղեցւոյ ստորագրութիւնը սպած
ենք Մարմաշինու վանաց հետ՝ Հոռոմոսին վանաց պատմութեան
մէջ. 1853 ին պատերազմին Արուճ աւանի բնակիչք մահմեա-
կանները արսորեցան. Հայք բնակիչ նստան անդ :

(քեռ. Ջաքարիայ Աթապէկի) յիշատակարանն է, զայ-
րոց և այլ գաղանաց բնակարանն է և այժմ՝ իսպառ ան-
մարդաբնակ լինելու համար, և ուրիշ շատերը՝ ինչպէս
և Տեղերու վանքը, որ մինչև 1843 թիւ Մահմեական-
նաց ձեռքն էր. Այց գիւղի թագաւորաց գերեզմանք, ուր
և այժմ Մահմեականք բնակելով, գերեզմանաց մա-
տուռը կպատուեն նոքա, մանաւանդ նոցա ցաւագարները՝
գիշերային ժամանակ մէկ մէկ ձրագ ձիթով :

Հայաստանի անիշխանութեան ժամանակ Արագածոտն
գաւառը ըստ մասին մնաց Արագածունի ասացեալ տոհ-
մին ձեռքը մինչև Պարսից վերջին տիրապետութիւնը:—
Արագածունեաց տոհմը Ջաքարիայ սպասարարի խոտոր-
նակ ազգականութենէն կիջանէ, որոնք ինչպէս Ակեղե-
ցեաց արձանագրութիւնը ցոյց կտայ յԱրագածոտն և
Շիրակ գաւառաց մէջ, այս ամեն գաւառաց կտիրէին.
յորոց Արագածոտն գաւառը միայն Արագածունեաց
տոհմին մնաց իբրև ժառանգութիւն :

Այս տոհմին տիրապետութիւնը վերը յիշած 1196
թուականէն մինչև Փրկչական 1685՝ այս ինքն յընթացս
489 ամաց անյիշատակ կմնայ՝ թէ Արագածունի տոհմն
որոնք յաջորդեցին նոյն գաւառի տիրապետութեանը,
նոյնպէս ևս թէ ուստի՞ Արագածունիք կոչուեցան, երբոր
ի հնուամ Արագածոտն գաւառը Ամատունեաց տոհմին և
վերջերը Ջաքարիա սպասարարին յետագայիցը ժառան-
գութիւն եղաւ :

Այլ ո՛րքան ինչ յայտնի է յաջորդութիւն Արագա-
ծունի ասացեալ տոհմին 1685 թուականէն մինչև ցայժմ
պատմութիւններէ և շահից հրովարտակներէ, և նոյն
տոհմն որքան որ մեկիքներ սերած են, Մեկիք Սալիմ,
Օսմանցւոց Շահ-սուլթան Հիւսէինի ժամանակ Տաճ-

կայ 1108 թուականին, որու տոհմը և ժառանգներ կան մեր օրովը *), և ունին յիշեալ սուլթանէն հրովարտակ և Եղիազար Վաթուղիկոսէն Աոնդակ, որոնք կհաստատեն թէ Արագածոտն գաւառը սեպհական կալուած էր Արագածունեաց տոհմէ եկած մելիք Սալիմին, որու յետագայք Նատր-շահի օրովը կը կառավարէին զգաւառը, և Պարսիկ իշխան չէր դրուիլ անդ : — Այս մելիքաց յաջորդութեանց պատմութիւնը մինչև 1848 թիւ դրած ենք մեք ի շարունակութիւն պատմութեան Արագածոտն գաւառի. բայց զործոյս համառօտութեան պատճառաւ թողինք ուրիշ ժամանակի :

Է. ԴԱՇՏ ԱՐՍՐԱՏԵԱՆ :

Վաղարշապատ մայրաքաղաքը Արագածոտն գաւառի Արարատեան դաշտին մէջ լինելով, հարկ կլինի մեզ յիշեալ գաւառի ստորագրութիւնէն յետքը Արարատեան դաշտին ստորագրութիւնը դնել և ապա կարգել զՎաղարշապատ :

(*) Արագածունի տոհմը ցարդ անձանօթ էր. 1848 ին նոյն տոհմի շառաւիղ Պ Խաչատուր մելիք Սեղումեանց Ջմիւռնացի Էջմիածին գալով, որու եղբայրն ևս Ստեփաննոս մելիք Սեղումեանց աստ էր վարուց, նորա մօտ տեսնել յիշեալ տոհմին Պարսից Շահերէն տուած հրովարտակներ ու Վաթուղիկոսաց Աոնդակներ, և որովհետև այս եղբարք իրանց տոհմական ազնուութիւնը որոնելու եկած էին, ինչպէս որ իրանց հայրն էլ յառաջուց եկած ու աստ վախճանած է և նոյն հրովարտակները թարգմանել տուած էր, վերը յիշած Արագածունեաց տոհմին պատմութիւնը այն թարգմանութիւններէն կազմեցինք : — Պ Խաչատուր մելիք Սեղումեանց Ջմիւռնացի, որ Ջմիւռնիոյ Հայրենասէր անուն օրագրին խմբագրիչն էր, 1851 թուին վախճանեցաւ ի Վաղարշապատ և թաղեցաւ իւր հօրը մօտ Աթոռոյ Միաբանից գերեզմանոցը :

Արարատեան դաշտի անուանակոչութիւնը Խորենացին կհաստատէ՝ որ Գեղեցիկն Արայէ մնաց. ըստ որում Արարատն էլ ուրիշները կըստուգաբանեն Արայի արատ, ինչպէս ընդարձակ դրած ենք դրաբառին մէջ :

Արարատեան դաշտը մեր ստորագրած շրջապատ լեռանց միջոցը բռնելով, որու հիւսիսային և հարաւային ծայրը Արագած և Մասիսը բռնած են, հինգ մասն կբաժանուի առանձին գետերով, որոց ոմանք ի հնումն էլ որոշ անուն ունէին, ա, դաշտն Սուրմարուայ, ի հնումն Արշարունիք և Մասեացոտն, Երասխայ հարաւային կողմը, Բարդուղ լեռին տակէն մինչև Փոքր Մասեաց ստորոտը. Բ, դաշտն Արմաւրայ՝ Երասխայ հիւսիսակողմը Արագած լեռին յառաջը, Ախուրեան գետը արեւմուտքէն և Մեծամօրն մեծ՝ արեւելքէն. Գ, դաշտն Վաղարշապատայ, որու արեւմուտքը Մեծամօր, և հարաւ՝ Երասխը կպատեն, իսկ արեւելքէն՝ Հրազդան. այս դաշտը Արմաւրայ դաշտին հետ Արագածոտն գաւառը կկացուցանեն. Դ, դաշտն Գվեայ, զոր կշրջապատեն Հրազդան արեւմուտքէն, Երասխ հարաւէն, Գեղամայ լեռները հիւսիսէն և արեւելքէն : Եւ է, դաշտն Շարուրայ ըստ մասին, որ Գարուայ լեռան գօտովը Գվեայ դաշտէն կորոշուի, և դիրքն է Երասխայ և Եղեգնաձորի լեռներուն մէջ : Այս ամեն դաշտավայր երկիրը բաժանուած չլինելով մէկ մէկէ լեռներով, բոլորը միատեղ Արարատեան դաշտ կոչուած է. ողբան որ իրարից անբաժան են, այսու ամենայնիւ առանձին առանձին անուններ ունին՝ ինչպէս որ գրեցինք՝ և առանձին գաւառաց մէջ են, նոյն իսկ Մասիս լեռին առաջի ընդարձակ հաւասարութեանը մէջ :

ՎԱՂԱՐՇԱԳԱՏ

ԲԱՂԱ ԲԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ •

ա. Վաղարշապատ Թագաւորանիստ քաղաք Հայոց պետութեան Արշակունիաց ժամանակին, զոր ազգային մատենագիրք աւելի կհոչակին քան Հայաստանի ուրիշ քաղաքները, Հայաստանի Արարատեան նահանգի մէջն է, որ միջնաշխարհքն է Հայաստանի, և որ Հայոց վարդապետ Թագաւորաց աթոռանիստ քաղաք և ազգիս երկրորդ քրիստոնէութեան դարու խանձարուր և արքունի ձմերանոց նոցին յԱրագածոտն գաւառի, բայց աւելի անծանօթ ուրիշ ազգաց մատենագիրներու, ինչպէս Հին Հայաստանի հեղինակը կվկայէ :

բ. Տակաւին յառաջ չբերելով Վաղարշապատ կոչուելուն պատճառը, որ երկրորդն Վաղարշակայ անունէն առնուած է, խնդրինք թէ յառաջ ի՞նչ անունով կը կոչուէր այս քաղաքը, ի՞նչ տեղ շինուած էր, կամ ո՞րչափ մեծացաւ յետոյ, որոյ վրա երկար ծանօթութիւն չկայ առ մատենագիրս՝ որչափ իր համբաւն է :

գ. Յառաջ այս քաղաքը Արտեմիս կը կոչուէր, յանուն Արտեմիս *) կոչոյն Յունաց ըստ Հին Հայաստանի հեղինակին:

(*) Արտեմիս անուն կոչոյ պատկերը պատմագիրք ցոյց կտան մեզ որ այս ժամանակէն (այս ինքն երբոր Վաղարշապատայ տեղը եղած քաղաքը Արտեմիս կը կոչուէր) շատ յետոյ Հայաստան բերաւ Արտաշէս Առաջին Արշակունի Հայոց Թագաւորը և դրաւ յԱրմաւիր յամի աշխարհի 3910 ըստ ժամանակագրաց՝ այն է 485 ամօք նախ քան զՔրիստոս. որու համար Խորենացին այսպէս կը գրէ. «Գտեալ Արտաշէսի զպղնձածոյլ ոսկեզօծ պատկերս Արտեմիտեայ և Հերակլեայ տայ բերել յաշխարհ մեր, զի կանգնեցին յԱրմաւիր» (Բ. գիրք, զԼ. ԺԲ):

նակին, զոր Հայք Անահիտ և Հռովմայեցիք Վիանայ կանուանէին, որու հիմնադիրը անյայտ կթողուն պատմաբանք *):

Խորենացին՝ որ այս Արտեմիտ անունը կտայ Վաղարշապատայ հին տեղւոյն, կյիշէ զայն միայն Վարդգէսի վրա զըուցուած առասպելին մէջ. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, եկեալ նըստաւ զՇրէզ բլրով, զԱրտեմիտ քաղաքաւ, զՔասաղ

Ըստ այսմ անհնարին էր թէ Վաղարշապատայ հին անունը Արտեմիս կոչոյ անունէն առնուած լինէր՝ որ Հայոց անծանօթ էր, և Վաղարշապատ Արտեմիտ անուն կրած ժամանակը՝ Հայք տարրապաշտք էին՝ չէ՛ թէ կոապաշտ. Իսկ թէ որ Հայաստան զԱրտեմիս պաշտելէն յառաջ Վաղարշապատ այս անունն ունէր, անծանօթ է այս մատենագրաց, կամ թէ որ Արտեմիս յԱրմաւիր բերուէն ետքը՝ Վաղարշապատ Արտեմիտ անուն կառնէր, պիտի կարող լինէի ուղիղ մտքով Խորենացոյ առասպելը Արմաւիր վրա հասկանալ. բայց Շրէզ բլուր և Քասաղ գետ (որոց մօտ կերևի Արտեմիտ քաղաք)՝ կհեռացնեն զայս կարծիքը նոյն քաղաքէն. Խորենացին Վարդգէսի հօր աւանը ցոյց կտայ զԱրտեմիտ (Բ. գիրք, ԿԵ), երբոր Ա. Խրուանդ կթագաւորէր յԱրմաւիր: Կհամարինք ուրիմն կամ Խորենացոյ գրուածքը այլայլել են անհմուտ գրիչք, կամ թէ Արտեմիտ անուն հին քաղաքը Արտեմիս կոչոյ անուամբ չէ, բայց տակաւին կմնայ տարակոյս, զի Խորենացին չի՛ յիշեր թէ ուստի՞ առնուած է այս անունը և ո՞վ շինեց Արտեմիտ քաղաքը:

(*) Իսկ Կաթոլիկէ Էջմիածնի Ստորագրութեան հեղինակի կարծիքը ամենևին անհիմն է, որ (Ա. հոր. եր. 77) կգրէ թէ Արտեմիտ քաղաքը շինել է Ա. Երուանդ, նախ զի ցոյց չի տալ թէ ուստի՞ առած է այս վկայութիւնը, երկրորդ՝ որ Արտեմիտ քաղաքը ի՞նչպէս միևնոյն ժամանակին Վարդգէսի նորոգութեամբն կոչեցաւ Աւան Վարդգէսի:

դետով, կուել կոփել զդուան Երուանդայ արքայի ,, (Բ. գիրք, ԿԼ):

Այս առասպելէն յայտնի կերևի Վաղարշապատայ հին քաղաքատեղին՝ որ Այրարատեան դաշտին մէջ եղած է Մասիս և Արագած լեռների միջոցը, Երասխայ հիւսիսակողմը Արագածոտն գաւառին մէջ, ուր էր և Հայկազանց Արմաւիրը, Վաղարշապատէն հինգ վեց ժամ հեռի յարեմուտս. ըստ որում հաւաստի ցոյց կըտան զայս Քասաղ գետ և Շրէղ բլուրը՝ որոնք նոյն գաւառին մէջն են *):

Վաղաքին դիրքը ընդարձակուած էր հիւսիսէն հարաւ յերկայնութիւն, իսկ լայնութիւնը արեւմուտքէն դէպ արեւելք՝ հազիւ կէս մղոն տեղ կըռնէր, այս ինքն Վասաղ գետէն՝ որ քաղաքին արեւմուտքն է քառորդ ժամու հեռաւորութեամբ՝ քաղաքին ծայրը համարելով մինչև Արեգ դուռը՝ որ արեւելք. բայց այս ընդարձակութիւնը գուցէ Վաղարշայ օրէն սկսաւ, որ զայն քաղաք արաւ, ինչպէս ներքեւը կգրենք:

Մեծամօրի կամուրջը՝ զոր Ագաթանգեղոս Վաղարշապատայ անուամբը կյիշէ Տրդատայ ժամանակը, կերևի թէ քաղաքի դիրքը այնքան երկարաձգուած էր՝ հիւսիսէն հարաւ, որ մինչև Մեծամօր կհասնէր քաղաքը. որոց մէկ մէկէ հեռաւորութեանը այժմ ժամ ու կիսոյ միջոց

(*) Մեսրոփ Թաղիսպանց իր Ճանապարհորդութեան մէջ (եր. 22), այսպիսի դիրք կտայ Վաղարշապատայ. «Դիրք Վաղարշապատայ մայրաքաղաքի սկսեալ յեղերց անտի Քասաղայ ցԱրեգ դուռ քաղաքին, երևի լեալ երկու հրասախաւ երկայն. իսկ լայնութիւն նորա ի վկայարանէ սրբոյ կուսին Հովիսիմեայ ցվկայարան Գայիանեայ՝ հազիւ կացուցանի մղոն մի և կէս ,, բայց այս պարտ է վերածել Վաղարշայ թոռին Տրդատայ ժամանակին:

կայ: — Վաղարշապատայ մեծութիւնը Վաղարշայ նորոգութեան պատմութեանը մէջ վերստին կգրենք:

Ինչպէս վերը ծանօթութեան մէջը գրեցինք, Արտիմէտ քաղաքի շինութիւնը անյայտ է թէ ո՞վ շինեց կամ ո՞վ այս անունը դրաւ, և թէ ա՞նդ եղած էր Արտիմիս կուռքը թէ ո՞չ, որու անուամբ քաղաքը կառուցին. — շատ դիւրին էր մեզ այս խնդիրը լուծել, թէ որ թերթ մի անգամ ազգային միհենական պատմութեան մէջ թողած լինէր սուրբ Ղուսաւորինչն Հայաստանի կռապաշտութեան աշխարհքէն. բայց արդէն ցոյց տուինք որ Արտիմէտ քաղաքի անուանակոչութեանէն շատ յետոյ Հայաստան եկաւ Արտեմիս Յունաց կուռքը, և Հայաստան սորանից յառաջ տարրապաշտ էր: — Այս ստուգութիւնը մենք ևս թողուցք ի խորս մթութեան ու անյնինք:

Արտիմէտ քաղաքը նորոգեց Վարդգէս իշխան՝ Ա. Երուանդայ քեռայրը աշխարհքի թուականին 3431. — 4630, հինգ ու կէս դարով Վրիստոսէ յառաջ. բայց կերևի թէ քաղաքը իսպառ ամայի էր Վարդգէսի ժամանակը *), զոր նորոգելով՝ իրեն աւան շինեց:

Խորենացին զԱրտիմէտ քաղաքը «հզօր աւան Վարդգէսի ,, կոչելով (Բ. գիրք, ԿԼ.)՝ կարծիք տուած է ինչ Հայաստանի հեղինակին, թէ ամրոց շինած լինի անդ Վարդգէս, և այս իր կարծիքը հաստատելու համար՝ ազգային պատմութեանը կապաստանի, որու մէջ գրուած է Վարդգէսի համար. «Շինեաց (Վարդգէս) ի վերայ

(*) Եթէ Վարդգէս նորոգեց զԱրտիմէտ քաղաքը, ուրեմն ամայի էր այն, և թէ որ ամայի էր, ուրեմն զԱրտիմէտ քաղաքը Ա. Երուանդը չէր շինել. վասն զի Վարդգէս և Երուանդ միևնոյն ժամանակի մարդիկ էին, և առաջինը երկրորդին փեսայ:

Վասաղ զետոյ ձեռտկերտ անուանեալ աւան Վարդգէսի, ի տեղուջ անդ, ուր յառաջն կայր քաղաքն Արտիմէտ յանուն Արտիմէայ դիցն, (Չամչեան Պատմ. Ա. հտր. եր. 102):

Արկրորդն Տիգրանայ ժամանակ Վարդգէսի աւանը երևելի և ծաղկեալ վաճառատեղի էր շինութեամբ և առուտուրով լցուած, և այս վաճառականութիւնը անդ ծաղկած կերևի Հրէից դաղթականները այն տեղ բնակելէն ետքը, զորոնք նոյն Տիգրան Արուսաղէմէն բերաւ, որոց համար կգրէ Խորենացին « յայնժամ եղև քաղաքադեօղ վաճառօք, » (Բ. գիրք, ԱԵ.) . « Իսկ թագաւորն Հայոց Տիգրան զգերութիւն Հրէիցն նստուցեալ յԱրմաւիր և յաւանին Վարդգէսի որ ի վերայ Վասաղ զետոյ, » (Անդ. Ժ.Օ.):

Ուրիշ մատենագրաց մէջ էլ կան վկայք Վարդգէսի աւանին և ընդհանրապէս Հայաստանի վաճառատեղի լինելուն՝ Բն Տիգրանայ օրէն. յորոց Պլուտարքոս Աուլուղղեայ վարուց մէջ Տիգրանայ տիրապետութեանց վրա խօսելով՝ այսպէս կասէ, « Վանդի սկիզբն իւրոյ բարգաւաճելոյն առեալ ի դուզնաքեայ ակնկալութեանց յուսոյ, գնալով գնայր (Տիգրան) և ազգս առեալ նուաճէր բազումս . . . և լցեալ զեղոյր զՄիջագետս ի բնակաւորաց Հելլենացոց, բազումս ածեալ ի Ալիլիկոյ, և բազումս ևս այլ խաղացուցեալ ի Ասպարդովիկոյ և բնակեցուցանէր անգր. առ այսօքիւք և շարժեաց զբոլուցոց զԱրարացիս զվրանաբնակսն ի վաղնջուց սովորութենէն և ի վրանացն հանեալ գնոսա, մօտ իւր բնակեցուցանէր վարել նոքօք ի շահավաճառութիւն, » (Գ. հտր. եր. 554 և 555):

Վաղարշ Արկրորդ Արշակունի թագաւորաց կարգը, վերջն Տիգրանայ որդին, քրիստոնէութեան երկրորդ դարու վերջը (այն է՝ 197 Փրկչական թուին) Վարդգէսի աւանը պարսպելով, իր անուամբը Վաղարշապատ կոչեց զայն, և արար թագաւորանիստ քաղաք. յորմէ հետէ և գրեթէ մինչև Արշակունի թագաւորութեանց վերջը թագաւորք անդ նստելով, զանազան անուններ տրուեցաւ Վաղարշապատայ առաւելապէս թագաւորաց արքունիքը անդ փոխադրուելուն պատճառաւ, որոնք Վաղարշէն յառաջ՝ Արուսնդակերտ, Արտաշատ, Սըծրին և ուրիշ տեղեր էին:

« Այժմ այս Վաղարշ (կգրէ Խորենացին) պատեաց պարսպաւ և հզօր պատուարաւ զԱւանն Վարդգէսի որ ի վերայ Վասաղ զետոյ, և անուանեաց Վաղարշապատ, որ և Նոր քաղաք, » (Բ. գիրք, ԱԵ.):

Մինչև Վաղարշայ ժամանակ, ինչպէս Արմաւիր, նոյնպէս էլ Աւանն Վարդգէսի յԱյրարատ՝ արքունի ձմերոց էին մեծն Արտաշեսի և Տիգրանայ օրերէն. նոյն իսկ Վաղարշայ նախնիքն էլ ձմերուան ժամանակ յԱյրարատ կնստէին, գուցէ այս երկու ձմերոցը, ուր իր ծընողք զարու միջոցին, ծննդեան երկուները կհասնի Բասէն գաւառի մէջ, և անդ կծնանի ինքն Վաղարշ. զոր Խորենացին կպատմէ. « Սա (Վաղարշ) շինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ ի վերայ ճանապարհին, ուր ի գնայն մօր իւրոյ ի ձմերոց յԱյրարատ, յանկարծակի պատահեալ երկանց ի գնացս, ծնաւ ի վերայ ճանապարհին ի գաւառին Բասեան, » (անդ):

Վաղարշապատ իրեն արդեան ունեցած երկքին աւանանց հետ՝ այս անուններս էլ ունեցաւ՝ Նոր քաղաք, Վաղարշ նորէն պարսպելուն համար, և Վաղաքուդաշա՝

նորա զիրքը դաշտային լինելուն համար, զորոնք յաճախ կյիշատակին ազգային պատմիչք Խորենացիէն ետքը: Ղազար Փարպեցի (ի 64 թղթին) « Վախճանեցաւ երանելին Մաշտոց ի Վաղարշապատ քաղաքի, զոր և՛ Նոր քաղաք անուանեն », : Երբեմն ևս առանց Վաղարշապատ անուն տալու կգրէ. « Եւ երանելին Երեմիա ի Նոր քաղաքէ », : իսկ Եսողիկ՝ « Յետ սակաւ աւուրց, ասէ, անցելոց՝ մեծ վարդապետն Հայոց Մեսրոպը վախճանեցաւ ի Քաղաքուդաշտի ի Վաղարշապատ », :


Եյս քաղաքիս մէջ ծնաւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը յամի 257, երբ որ Խոսրով նորա հօրը Ենակայ ասպնջական եղաւ Երտաշէր Պարսից թագաւորէն խորամանկութեամբ փախչելու ժամանակ, որ զԽոսրովը սպանեց: Եւ այսպէս Վաղարշապատ ազգիս քրիստոնէական հաւատոյ երկրորդ Լուսաւորչի ծննդեան խանձարուրը եղաւ :

Եյս ժամանակս էր որ Տրդատ իր թագաւորական արժողը Վաղարշապատ հաստատեց, ուր որ իր հայրն ևս նստել էր Խոսրով, երբ որ նոյն իշխանութիւնը Վիտկե տիանոսէն առնելով դարձաւ Հայաստան, և զսուրբն Գրիգոր չարչարեց, և զկնի այնորիկ քրիստոնէական հաւատքը ընդունեց նոյն իսկ թագաւորական քաղաքին մէջ :

Սորա սքանչելի դարձը եղաւ դրեթէ՛ պատճառ որ նոյն մայրաքաղաքի մէջ ի հիմն քրիստոնէական հաւատոյս մերոյ՝ Հայաստանեայց կաթողիկէ Մայր Եկեղեցին կառուցուեցաւ ի պատիւ սրբոց Հռիփսիմեանց նահատակութեանը, ինչպէս տեսլեան մէջ ցոյց էր տուել հրեշտակը սրբոյն Գրիգորի *):

(*) Կաթողիկէին Վաղարշապատայ՝ ընդ որում՝ և երից վկայարանաց պատմութիւնը՝ առանձին թողնք տպելու :

Տրդատայ օրովը առաւելապէս Հռիփսիմեանց նահատակութեանը պատճառաւ Վաղարշապատ քաղաքի ինչ ինչ տեղերը կյիշատակէ Եգաթանդեղոս. « Ընթացեալ, ասէ, ընդ քաղաքամէջսն, ելանէր ընդ արևելս կոյս ընդ Երեգ դուռն քաղաքին », (ի թուղթն 3):



ՎԱՏԻՔ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ ԿՈՒՍԻՆ .

Քաղաքիս երկու դուռն կյիշատակուի, հարաւային՝ որ կհաներ ընդ կամուրջն Վաղարշապատայ, և արևելեան՝ որ Երեգ կը կոչուէր, որու համար ստորև :

Վերի բանին մէջ ցոյց կտայ Եգաթանդեղոս քաղաքի հարաւակողման կամուրջն էլ. « Աէսք անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամօրի կոչին », (ի թուղթն Բ):

Աստի կերևի Վաղարշապատայ զիրքը երկարեալ դէպ ի հարաւ, որ մինչև Մեծամօր գետը կմերձենայր. որու կամուրջը գուցէ քաղաքին մօտ լինելու համար՝ նորան կընծայուի: — Այլիշէ և քաղաքին մեծ խրամը, որ Պարկէն-փոս կը կոչուէր, հարաւակողմը եղած մահապարանների սպանման ճախճախուտ տեղին մօտ. « Ի տեղին յայն, ասէ, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս, ի ճախճախուտ տեղի մի մօտ ի Պարկէն-փոսն, որ շուրջ գայր զքաղաքաւն », (ի թուղթն 20):

Յետագայ մատենագիրներէն ոմանք կասեն որ Վաղարշապատայ զիրքն էլ Ասիական քանի մի հին քաղաքաց ձեն ունէր: Չայս կտուգէ արդարև Ազաթանգեղոս: Վաղարշապատ որ իր շրջապատը բռնող խրամ ունէր պատերազմի երեսէ պաշտպանուելու համար, նոյնպէս էլ արքունիքը ապահովացնելու համար միջնաբերդ ունէր իր մէջը, զոր Ազաթանգեղոսէն կիմանամք. « Ասլթիւք վաղելով ցուց բարձեալ մարդկանն կէսք ի բերդամիջին և կէսք զքաղաքամէջնն լցին խնձոյիւք », (ի թուղթն 21):

Եթէ Վաղարշապատ այոց թագաւորաց ձմերոցն էր, աւելի պարզ կը գրէ Ազաթանգեղոս այս բանիւ. « Եւ ինքն թագաւորն (Տրդատ) խաղայր գնայր ի ձմերանոցս յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ քաղաք », (ի թուղթն 10):

Քաղաքի երկարաձգութիւնը մինչև Մեծամօր գետը հարաւի կողմէն, նորա կեարոնամիջէն առնելով, ուր յետոյ հրեղէն սիւնը ի տեսլեան երևեցաւ, որ կձևակերպէր զեկեղեցին, Ազաթանգեղոս կհաստատէ այս բանիւ. « Ետ հանել զնոսա (գՊայիանեանն) շղթայիւք ի քա-

ղաքէն ընդ դուռն հարաւոյ ընդ կողմն պողոտային, որ հանէր ի Մեծամօրի կամուրջն », : Աստի կերևի թէ քաղաքի հարաւային ծայրը մերձ էր գետին, կամ գէթ մինչև ճախճախուտ տեղը եղած փոքրիկ բլուրները, որոնք այժմ Քիւլթայ կը կոչուին, և իբրև պարիսպ կձևանան հին քաղաքին ի հեռուստ քառորդ ժամու չափ դաշտի ամայութեան մէջ՝ արևելքէն արևմուտք երկարած, որոց հարաւը ի հանդիպոյ Մեծամօրի հին կամրջատեղին է, և այժմեան Վաղարշապատայ հարաւակողմը կբաժանէ Խախուկի ասացեալ աթոռապատկան դաշտը. այս բլուրները ինչպէս Քիւլթայի, նոյնպէս ևս կը կոչուին Չափի գլուխ. սոցանից դէպ ի Մեծամօր, երկիրը ցած լինելով քան զՎաղարշապատայ դաշտը, ջուրը բարձրանալով՝ բոլոր գետեզերքը մինչև նոյն իսկ Մեծամօրի Երասխայ խառնուորդը՝ ուր բոլոր ճախճախուտ և եղեգնուտ են, անանցանելի կլինին:

Այսքան ընդարձակ միջոցը մինչև յիշեալ բլուրները Վաղարշապատայ մասը առնելով, Ազաթանգեղոսի ասածը կստուգուի, որ մինչև Մեծամօր կհասնէր քաղաքը հարաւի կողմէն մէկ պողոտայով: Այսպէսով Վաղարշապատ՝ պատմաբանից տուած ձևը կառնու, այս ինքըն հիւսիսէն դէպ ի հարաւ երկարաձև տարածուած. ապա թէ ո՛չ՝ ինչպէս վերը գրեցինք, դժուարին է այժմեան դիրքը հնոյն Վաղարշապատայ վրա առնուլ, և այսպէս մինչև Մեծամօր հասցնել գրեթէ ժամու կէս միջոցի ամայութիւնը:

Իայց շին այաստանը՝ որ տեղւոյն բնակչաց աւանդութիւնը կհամարի, թէ Վաղարշապատ ձգեալ կտարածուէր մինչև մերձ յԱրևան, անհիմն է բոլորովին, և ուշադրութիւն չէ՛ արած պատմութեանը: Վկայարանն

սրբոյն Հռիփսիմեայ՝ որ է ի հիւսիսոյ Ա շաղարշապատոյ և արաքայ նորա, հազիւ թէ քառորդ ժամու հեռաւորութիւն ունի, և Արեգ դուռն քաղաքին՝ ուր կերևի և արևելեան պարսպի հիմունքը, հազիւ թէ մի ասպարէզ հետի է ի Աթուղիկէ Եկեղեցւոյն, ուր էր ի հնուքս Տրդատոյ սրբունի պալատը, և այս պարսպի երկայնութիւնը հիւսիսէն հարաւ՝ եօթն հարիւր յիսուն քայլ միայն է, և ի միջավայրին Արեգ դրան տեղը. բայց և այնպէս այս հիմունքը պարսպէն մնացած փոքր ինչ մասն է, և քաղաքի հին դիրքը պարզապէս կնշմարէ, որ արևելքի կողմից ընդարձակութիւն չունէր. իսկ Արևան երեք ժամ հեռի է Ա շաղարշապատէն, և Տրդատոյ ժամանակը անուն էլ չունէր:

Ինքնին յիշեալ հեղինակը իր սխալ տեղեկութեան վրա Հռիփսիմեանց վկայարանը քաղաքէն արտաքոյ կը դնէ, որ հազիւ ինչպէս ասացինք, քառորդ ժամ միայն է հեռի. թէ որ վկայարանը արտաքոյ էր քաղաքին, ինչպէս որ իրաւ է, ուրեմն աւանդութիւն չկար, որով և Ա շաղարշապատ մինչև յԱրևան չէր ընդարձակուէր *):

Այլ թէ Ա շաղարշապատ ինչպէս դէպի հարաւ, նոյնպէս և ս հիւսիսէն դէպ արևմուտք ընդարձակութիւն ունէր, այս աւելի հաւանական է. վասն զի Քասաղ գետի վրա կվկայեն պատմիչք թէ եղած է Ա շաղարշապատ, ինչպէս որ գետն էլ արևմուտքն է քաղաքին. մանաւանդ որ այս դիրքով քաղաքը եռանկիւնի ձև կանուր, որ սովորական է Ասիական քաղաքաց. «Աւայս ձև եռանկիւնի շինուածոց գրեթէ՛ յատուկ էր

(*) Այս սխալ տեղեկութենէն առնելով Պ. Պրոսսէ Գաղղիացին, Ա շաղարշապատոյ դիրքը սրևելքէն արևմուտք կընդարձակէ:

նախնեաց, կվկայէ Մեսրովը, որք պաշտէին զարարիչն ի հուր, և ամենայն ինչ ի նոյն ձև յօրինել՝ ախորժելով ընտրէին , , :

Թագաւորական պալատը քաղաքամիջին էր կաթուղիկէ Եկեղեցւոյ այժմեան տեղին մօտ, զի անդ տաճարին տեղը որոշելու համար կը գրէ Ագաթանգեղոս, «Ահն այրն լուսաւոր, էջ . . . ի յատակ երկրիս, ի շինամէջ քաղաքիս, մօտ յապարանս արքունի , , *):

Խոսքովայ Բ ի ժամանակը՝ որ թագաւորեց յամի Տեառն 316 մինչև 320 թիւը, Աաւկասեան ազգերը պաշարեցին զԱ շաղարշապատ Պարսից Շապուհ թագաւորի թելադրութեամբ, որոնք թէպէտ և երկու բերէն աւելի էին, ինչպէս կպատմեն, բայց Հայոց արևելիայ և արևմտեան զօրապետներէն յաղթուելով, հաւաքական փախան և քաղաքը ազատուեց:

Բայց երկրորդն Արշակայ օրը յամին 380, Ա շաղարշապատ Շապուհոյ զօրքերը պաշարելով, որոց զօրավարը Մեհրուժանն էր ուրացող, առին քաղաքը և քանդե-

(*) Թագաւորական պալատի տեղը այժմեան Բլիւֆարթարանի ասացեալ պարտէզն է, ուր Սիմէոն Աթուղիկոսը շինել էր Բղթաշինութեան գործարանը, ուր և երբեմն բրելու ժամանակ՝ զանուեցան մարմարոնեայ քարեր շինութեանց լուսամտից և դրան, և երեկեալ փոքրիկ սալայատակ մի եռանկիւնաձև և զանազան զոյն քարով: 1825ին տաճարի տակը մաքրելու միջոցը Ղազարապատ ասացեալ հիւրանոցի մօտ ներքնատուն մի բացուեցաւ թրծեալ աղիւտով շինուած, որոց վրա խաչի նշաններ փորուած էր: Այս տեղերս միշտ կերևին և այժմ կրաշաղախ և աւազախառն որմերի կտորուանք հողի տակ, որոց համար կաթուղիկէ Եկեղեցւոյ ստորագրութեան մէջ:

ցին *), բնակչաց մեծ բազմութիւնն էլ քչեցին Պարսկաստան գրեթէ տասնեկինն հազար տուն. որոնք շըրէից ազգէն էին հաւատացեալք ի Վրիստոս. զոր կյիշատակէ Բիւզանդ. « Եւնուին, ասէ, և զՎաղարշապատ քաղաք, քանդէին, բրէին զքաղաքն, ի հիմանց տապալէին. և խաղացուցին յայնմ ևս քաղաքէ տան և ինն հազար երգս », (Վ. 55):

Մեկտէ Վաթուղիկոսի ժամանակ երբ որ Վաթուղիկոսական Աթոռը Վիլն փոխադրուեցաւ յամին 453, Վաղարշապատ ևս ամայանալու սկսած էր, մանաւանդ Արշակունեաց թագաւորութենէն ետքը, որ ժամանակ որ Պարսիկները հետզհետէ պատերազմով Հայաստան մտնելով, Վաղարշապատայ ևս վերջին հարուածը տուին :

Բովանդակ Մարզպանաց ժամանակները պատմագիրք Վաղարշապատայ վրա ամենեկին յիշատակութիւն չեն աներ, և աստի աւելի կհասկանանք նորա քաղաքական

(*) Հեղինակն Հին Հայաստանի եր . . . Վաղարշապատայ աւերանաց ժամանակը կանդիտանայ. « Ոչ գիտեմք թէ ե՞րբ և ո՞րպէս հիմնայտակ եղև », « Թէ ըստ Բիւզանդայ՝ որու բանը ինքը կգրէ. քանդէին զքաղաքն զօրքն Շապհոյ, ապա ժամանակը յայտնի է յիշեալ քաղաքի կործանման, որ է Վաթուղիկոսական Աթոռը Վիլն փոխադրուելէն եօթմանասուն և երեք տարի յառաջ, յամին 380 :

Նոյն հեղինակը Վաղարշապատ քաղաքը հանդերձ իւր գաւառով Արարատեան նահանգի անձանօթ գաւառաց հետ կգնէ. մի՞թէ իրեն անձանօթ եղած գաւառները՝ բոլոր ազգին անձանօթ կլինի: — Աւելի լաւ էր իրեն անձանօթ եղած մատենագրութիւնները յիշէր, ի կարգս որոց Զաքարիայի պատմագրութիւնն է, որ Վաղարշապատը յԱրագածոտն գաւառը կգնէ, որպէս և է իսկ, քան թէ Արարատեան նահանգի գաւառներէն ոմանք ընդհանրապէս անձանօթ կոչել:

վիճակը, որ Պարսից իշխանութեան թեկն տակ լինելով, միշտ նորա սպառնալիքն էլ հեղեղի պէս իր վրա կթափէր Վիլն քաղաքէն. ուր նոցա բռնաւորական գահը կաեղակալէր. այս էր պատճառ իր կործանմանը, այնպէս որ յընթացս 472 ամաց, երբ որ Վաթուղիկոսուէք իրենց թափառականութեան մէջ Վաթուղիկէ Նիկիդեցոյն խնամք ցոյց կտային, չէին կարող երբէք Վաղարշապատայ անկմանն էլ ձեռք կարկառել:

Վահան Մամիկոնեան այս թուականներէս վերջը Հայաստանի վրա ընդհանուր հրամանատար կարգուելով, յիշեալ Վաթուղիկէն կնորոգէ, և հաստատուն պահելու համար զայն՝ կրօնաւորական ուխտին վերակացու կընէ զՎաղար Փարպեցի պատմաբանը, բայց և այնպէս աչք չի դարձներ ամենեկին Վաղարշապատայ նման անկեալ քաղաքամօր վրա: — Որքան յափշտակութեան առարկայ եղած էր Պարսից, կերեւի թէ Վաղարշապատայ նորոգութեան քարերու տաշուիլն անգամ պատերազմի նշան կհամարուէր Պարսից դէմ: Այսպէս ևս անյիշատակ է Վաղարշապատ իր աւերանաց մէջը բովանդակ Բազրատունեաց թագաւորութեան օրը. իսկ աւերանաց յիշատակները տեղ տեղ կպատմուին յետագայ ժամանակների մէջ, որոնք խառն են Վաթուղիկէ Նիկիդեցոյ պատմական անցից մէջ:

Բայց այս ամեն աւերանաց ժամանակն էլ Վաղարշապատ ո՛չ երբէք մնացած է առանց բնակչի: Վահան Մամիկոնեանը երբոր զՓարպեցին վերակացու կարգեց կրօնաւորաց մենաստանին, Վաղարշապատայ բնակիչները կհոգային շատ անգամ մենաստանի պիտոյքը կամ գէթ կօղնէին նոցին ըստ մասին, և զայս ցոյց կտայ նոյն Վաղարայ թուղթն առ Վահան տէրն Մամիկանէից,

Տեղեկալ Կաթողիկոսաց օրովը. Յովհաննու Ման-
դակունույ՝ յամին 480, Սամուէլի՝ 492; Մուշէի՝ 502,
և Սահակայ Բարդի՝ 510. որոնք Վաղարշապատայ Կա-
թողիկոսական Աթոռէն հեռացած, թափառական կը-
շըջէին քաղաքական բռնաւոր իշխանութեան երեսէն:

Անշուշտ երբ Կոմիտաս Կաթողիկոսն էլ հարիւր տա-
րիէն գրեթէ հոքը յամին 617, Կաթողիկէի գմբէթը կո-
փածոյ քարով կշինէր, Վաղարշապատ բնակիչ ունէր.
որոնք թէ և Վարդանանց ժամանակի Շապհոյ հալա-
ծանաց երեսէն ցրուած կերեւէին այլևայլ տեղեր, այլ ար-
դէն Մամիկոնեանն Վահանայ մարդպանութեան օրից
երկիրը խաղաղանալով, բնակիչք հետզհետէ վերադաձել
էին և Կաթողիկոսք կնստէին երբեմն երբեմն ի Վաղար-
շապատ:

Բարեկէն Կաթողիկոս յամին 491, Ե. Ժողովը գու-
մարեց ի Վաղարշապատ Վաղկի զոնի դէմ. Կոմիտաս
վերոյ գրեալ բովանդակ շինութեան ժամանակը, իսկ Ներ-
սէս Գ. Շինողն՝ յամի 640, գրեթէ շարունակ կնստէր
ի Վաղարշապատ՝ երբ որ զսուրբն Գրիգոր կշինէր յա-
ռապարին, Խորվիրապայ վանքը, սուրբ Սարգիս ի Յուշի,
և այլ ուրիշները, որովք յայտնի կերևի թէ բնակիչք կա-
յին ի Վաղարշապատ և ձեռնտու էին այս ամեն աս-
տուածահաճոյ շինութեանց թէ՛ ձրի թէ՛ մշակութեամբ,
որոց համար կվկայէ Յովհ. Աթ. պատմաբան թէ Ներս.
Շինողն՝ «բնակութիւնս երկուամարդաց կացուցանէր, և ինչ

Բովանդակ Բագրատունեաց ժամանակ պատմութեան
ընթացքը այնպէս ցոյց կտայ՝ որ Վաղարշապատ Գվին
նստող Պարսից իշխանութեան տակն էր տակաւին, ինչ-
պէս որ Հայոց Բագրատունի թագաւորք ևս հարկատու
էին նոցա, մանաւանդ թէ սոցա թագաւորական իշխա-

նութիւնը ո՛չ երբէք ընդարձակեցաւ յարևերս մինչև ի
Վաղարշապատ՝ որ մերձ էր Գլխայ Արագածոտն գաւա-
ռի Արարատեան դաշտին մէջ, այլ ամփոփուած էր Շի-
րակայ մէջ և դէպ յարեմուտս. ուստի և ո՛չ երբէք հաս-
տատութիւն գտաւ Վաղարշապատ և ապահովութիւն
Կաթողիկոսական Աթոռը Պարսից բռնութենէն, ինչ-
պէս կվկայէ Յովհաննէս Կաթողիկոս պատմաբան *), ո-
րոյ բանքը յառաջ կրերնք Կաթողիկէ Նկերեցւոյ ըս-
տորագրութեան մէջ:

Բագրատունեաց թագաւորութեան վերջանայէն գրե-
թէ երկու հարիւր տարի հոքը, Վաղարշապատ իւր Ա-
րագածոտն գաւառով մէկ տեղ անկաւ Ջաքարիայ Սպա-
սալարի իշխանութեան տակ յամին 1184, երբ որ նա բո-
լոր Արարատեան նահանգը՝ սկսեալ ի Բաղէշ քաղաքէն
որ ի Բզնունիս, մինչև յԱրտաւիլ քաղաք Ատրպատական-
նի, Տաճկաց ու Պարսից ձեռքէն պատերազմով առաւ,
և Վրաց թագաւորութեան այս ամեն երկիրը հնազան-
դեցոյց. իւր հաւատարիմն Վաչէ ըստ վկայութեան Ջա-
քարիայ պատմագրի, «Վասն միամիտ ծառայութեան
նորա կարգեաց, սակ, գնա (զՎաչէ) իշխան իշխանաց, և
հտ նմա մեծութիւն և իշխանութիւն ամենայն Արագա-
ծոտանն, Շիրակայ, Նդայ, Անբերդու, և ամենայն եզե-
րաց նորա մինչև ցԱրասխաձոր,» (**):

Այս Արագածոտն գաւառի մէջն է, ինչպէս գրեցինք,
և Վաղարշապատ քաղաքը Արասիայ հիւսիսոյ կողմը:

(*) Պատմագրութիւն Յովհ. Կաթողիկոսի, տպեալ ի Մոսկով,
եր. 184 - 193:

(**) Ջաքարիա պատմագիր, Գ. հոր. զԼ. Թ.:

Եւ ինչպէս որ այս պատմութենէն կ'քաղենք, Վաչէ իշխանէն ետքը վերոյ գրեալ Երարասեան բոլոր գաւառները Վրաց թագաւորութեան հետ ի միասին Ռուզուքան Վրաց թագուհւոյ օրովը՝ որ Թամարայ դուստրն էր, Թաթարաց ձեռքն անցաւ, որոնք Հոնաց աշխարհքէն գալով՝ տիրեցին Հայոց և Վրաց, և այս ժամանակը Վուրդ Իշխան՝ որ Վաչէի որդին էր, կարգեցաւ հօր տեղը իշխան Երագածոտն գաւառի յամին 1250 և Հայոց ՌՂԹ: Ուստի այս ժամանակէս ինչպէս հաւանական է, վերստին սկսան հետ զհետէ գալ տարագիր ժողովուրդը և բնակիլ ի Վաղարշապատ և Մարագածոտն գաւառը. վասն զի՝ Չաքարիա սպասալարի օրէն բոլոր Երագածոտն, Շիրակ և մերձակայ գաւառներն եղած ամայի վանքերը վերստին նորոգուեցան նոյն իսկ Չաքարիայի և իւր յաջորդ իշխանաց ձեռքով, ինչպէս արձանագիրները և Չաքարիա պատմագիրը կ'վկայեն, և բաւական խաղաղութիւն վայելց երկիրը, մինչև այս ամեն գաւառները վերստին յափշտակեցին մէկ կողմէն Օսմանցիք, և միւս կողմից Պարսիկք:

Երբ որ Փրկչական 1441 թուին Հայրապետական Եթոռը Վաղարշապատ հաստատուեց կրկին, Վաղարշապատ Պարսից իշխանութեան տակն էր, ու երկրի Պարսիկ իշխանացը կալուած: Պրիզոր Ժրդ Վաթուղեկոս Մակուեցի Չալալեկեանց կոչեցեալ, յաջորդ Արակոս Վաթուղեկոսի, կգնէ այս գիւղը ի սեպհականութիւն Լշմիածնի՝ Սէյիդ բէկ անուն Պարսիկ իշխանէն, որ այս ժամանակը կտիրէր այս գիւղին, և թուղթը հաստատել կտայ Չամանաղին անուն Երեւանայ Վաղի ստորագրութեամբ և կնքովը՝ Հիճրեթի 832 թուին, որ է 1454 ամի Փրկչէն:

Բայց երեք տարիէն ետքը Պարսից Հիճրեթի 835 ին յամին 1457, Ռոստոմ անուն Պարսիկը որ Եմիր Սեֆասայ թուռն էր, բանութեամբ Վաղարշապատայ կտիրէ, այլ վերոյգրեալ Վաթուղեկոսը ուրիշ գեղերի հետ դարձեալ կգնէ զայն և դասաստանական գրով կհաստատէ սուրբ Լշմիածնի սեպհական կալուած:

Շահ-ապաս առաջին, որ յամին 1604, ՌՆՊ, և կաւ յԵրեւան՝ որ Օսմանցոց ձեռքն էր, բոլոր Երարասեան նահանգը փոխադարձ պատերազմներով մինչև քսանեկինն տարի գրեթէ արիւնջուայ արարին, որով իսպառ ամայի և անմարդաբնակ բոլոր ժողովուրդը տարագիր ու գերութեան մէջ էր, որոց հետ և Վաղարշապատաշատ սակաւ Մահմէտական կրնակէր անդ. յորոց ոմանք ճանապարհորդներէ սողումութիւն առնելու համար, Վաթուղեկէ Եկեղեցւոյ տաճարի մէջ ճրագ կվառէին, որ բովանդակ ամայութեան մէջ էր, ինչպէս Առաքեալ պատմագիրը ընդարձակ կգրէ, որու բանքը նոյն Եկեղեցւոյ ստորագրութեան մէջ:

Բաւական է որ այս արշաւանաց ժամանակին պատմագիրք ցոյց կտան որ միայն Երարատեան նահանգը ոսնակոխ արարին երկու կողմից ևս երկոքին թագաւորք բազմութիւ և արխնորբու զօրքերով երկու անգամ մէկմէկի վերայ յարձակելով և երկիրը իրարից յախշտակելով. առաջին անգամ որ Հայոց ժողովուրդը սովով ու սրով մինչև Եսպահան գնաց, մնացածները քանի՞ քանի՞ տանջանքներով իրանց կեանքը չզրաւեցին, թող թէ երկիրն ու ստացուածքը: — Եյս ամեն գերեվարութեանց ետքն էր, որ տաճկաց Սուլթանը Մուրսա չորրորդ յարձակեցաւ Մարաբան և առաւ Երեւան յամին 1635:

Երևանայ քաղաքական իշխանութիւնը այսպէս տակն ու վրա եղած ժամանակին շրջակայ երկրին իշխան կարգուելով Ամիրգիւնէ նստաւարը, կտիրէ և Աղարշապատայ. բայց իր Հայաստէր բարքովը Եջմիածնայ հոգևորականայ խնդիրը յարգելով, որոց մօտ կտեսնէ Երևանայ առաջի դատաւորաց հաստատեալ թուղթը Պրիզոր Կաթուղիկոսի ձեռքով, Աղարշապատ գիւղը վերստին կը դարձնէ Աթոռոյն. և ինքը ևս թուղթ կտայ՝ որ ոչ ոք ձեռնամուխ չի՝ լինի գիւղին, Հիճրէթի 1022 ին, և Փրկչական 1612:

Ամիրգիւնէի որդին՝ հօր իշխանութեանը անցնելով, բռնութեամբ տիրեց Աղարշապատայ, սարևկան մուտքը ինքն ստանալով. սորանից յետոյ գիւղի հին տիրողների ժառանգները յափշտակեցին գիւղը Աթոռոյ ձեռքէն մինչև Փրկչպոս Կաթուղիկոսի օրը, որ Աթոռոյ կալուածոցը հոգ տանելով, իր ժամանակի Երևանայ իշխող խանի վկայութեամբը Բ. Շահ-ապատ Պարսից շահէն խնդրեց ու Աղարշապատ վերստին Եջմիածնի սեպհականեց նորա հրովարտակովը Հիճրէթի 1060, յամին 1650:

Բայց Բուղայեցի Յակոբ Կաթուղիկոսի օրէն ոչ ոք այլ ևս վէճ չի հանեց Աղարշապատայ տիրելու. թէ և Յակոբ և Ամէն Կաթուղիկոսաց հետ վէճ հանեցին Աղարշապատայ առաջուան տերանց մնացած ցեղերէ ունիք, բայց նրանով աւելի հաստատեցին գիւղի Եջմիածնայ սեպհական լինելը. որոց վկայագիրք, վճռաթուղթը, ժամանակի դատաւորաց և շահից ապահովութեան Փարմանները կան մինչև ցայժմ Աթոռոյ գիւղանատանը պահուած. այս պատճառաւ Աթոռոյ քանի մի գիւղօրէից կալուածագրոց ցուցակը ծանօթութեան մէջ

յառաջ կբերեմք յիշատակի համար Կաթուղիկէ Ակեգեցոյ ընդարձակ պատմութեանը մէջ:

Աղարշապատայ այժմեան գիւղը առաջինը չէ. մինչև Ամէն Կաթուղիկոսի ժամանակ գիւղը կից էր վանքի պարսպի հետ՝ զոր Սովսէս Կաթուղիկոսը շինած էր, այն է ցամն 1763. մանաւանդ որ շրջապատ շինուածքը վանքին պարիպ ձևացած էր, ուստի և գիւղն Աղարշապատ չունէր. առանձին կիցեցի: Ամէն Կաթուղիկոս նոր պարիպը շինելու ժամանակ Կաթուղիկէ Ակեգեցոյ շրջապատը, Աղարշապատ գիւղը վանքի արեւմտեան կողմից բոլորովին կվերցնէ *), և հիւսիսի կողմը փոխադրելով առնները, պարսպէն հարիւր գողի չափ հիսի, այնպէս որ գիւղացւոց գուցէ և վանքի հին գերեզմաննոցը՝ որ այս միջոցն էր ընդ մէջ պարսպին և գիւղին ի հիւսիսոյ, գիւղի հարաւային կզբ կմնայ հրապարակի մէջ, որ մինչև Ռուսաց տիրապետութիւնը կբմնար. յետոյ ծանապարհը հարթելու ժամանակը կխտվ չափ հողի տակը ծածկեցին, և մեծ շինարի ծառը (չաքաղած)՝ որ շատ հնուց գերեզմաննոցին մէջը կար՝ կրտրեցին:

Աղարշապատ գիւղը այսպէս Եջմիածնի արեւմուտքէն գեպ ի նորա հիւսիսակողմն փոխադրուելէն ետքը, Ամէն Կաթուղիկոս գիւղացւոց համար շինել տուաւ առանձին Ակեգեցի յանուն սուրբ Աստուածածնի՝ փայտածածկ ի գիւղամիջին. և այս ամեն արած փոփոխութիւնը գրած է նայն Հայրապետն. Բաճիւ անուա-

(*) Աղարշապատայ հին գիւղի տեղը որ յարեւմուտս պարսպին Եջմիածնի կայ և արգ իսկ հին շինութեան որմն. որու մօտ քակեալ ժամանակ բացուեցան հիմունք կրով ու աւազով շինուածք:

նեալ իր մատենին մէջ *): Այս եկեղեցին որ երկար քառանկիւնի ձևով շինուած էր՝ երեք սեղանով, արևմտեան դրան ճակատին վրա դրած էր նոյն Աթուղիկոս հետադայ արձանաղիւր **):

Իսկ Աղաբաշապատայ բնակիչ ժողովուրդը անցեալ փոխադարձ պատերազմական խռովութիւնները դադարեցնելու համար հետզհետէ դարձան ի տարազրութիւնէ, մանաւանդ երբ որ Մովսէս Աթուղիկոս սկսաւ նորոգել տաճարը և շրջապատ շինութիւնները հիմնել (յամին 1629):

Հերակլ Թագաւորն Արաց 1779 թուին, Երեւանայ վրա պատերազմի ելած ժամանակին, երբ որ երկրի բնակիչքը տարազիր զնացին Ղարս ու Պայազիտ, Աղաբաշապատցիք ևս անցան Պայազիտ: Հերակլ որ չորս ամիս պաշարեց Ղարեան, ժողովուրդը ասպատակութեանց երեսէն պատուարուեցաւ Լջմիածնի պարսպի մէջ, ուր է այժմեան հին շուկայն:

Հերակլի արշաւանքէն քսանհինգ տարի ետքը, երբ որ Արաստանի կուսակալ Յիցիանովը յամին 1804, յարձակեցաւ Երեւանը Պարսից ձեռքէն առնելու, Լջմիածնի միաբանք՝ որ արդէն ցրուած էին, Երեւանայ Մահ-

(*) Զաֆու կոչուած գիրքը՝ իրրե յիշատակարան բոլոր կարուածոց Աթոռոյն՝ գրած է նա ինքն Սիւննոս Աթուղիկոս, յորում Աթոռոյ զանազան զիւղից պատմութիւնը, յոր ժամանակէ գնելը, և որպիսի վէճ եղած է իւրաքանչիւրոց վրա, կամ յորոց գնեալ են, մի առ մի կնշանակէ մինչև իր ժամանակը:

(**) « Ենեցաւ սուրբ Եկեղեցիս, և հեռացաւ գեօղս Աթոռոյն ի շինել պարսպի նորին՝ արդեամբք և հրամանաւ Տեառն Սիւննի Սիբազան Աթուղիկոսին Երեւանցոյ ի պատիւ սրբուհոյ Աստուածածնին, յորոյ անուն իսկ կառուցաւ. ի ՌՄԺԶ »:

մատ խանը երկրի բնակիչքը՝ ընդ որս և Աղաբաշապատցիք՝ վարեց ի Շիրակ Օսմանցոց սահմանադրութեանց անդ դուրսէ Աստուածային անօրէնութիւնէն Ղարսէն Ղարափափա կոչեցեալ Մահաթախանները այս դաղթական ժողովրդոց վրա յարձակուելով, սոքա իրանց պահպանութեամբը մասն ի Բամբակաձոր — յԱշոց դաւառ Երարատեան, անախ անցան ի Հաղպատ և ի Սանահին. ուր կուսակալն Երեւանայ պատերազմն յետ դառնալով, Արաստանի Հայոց Յովհաննէս Եպիսկոպոս Առաջնորդի հետ, այս տարազրեալ ժողովուրդը տարաւ ի Տփլիս, և բնակութիւն տուաւ նոցա Հալուարար. ուր Հերակլի ժամանակին գնացած Երեւանայ երկրի ժողովուրդը՝ կոչուեցան Հին Երեւանցիք, իսկ այժմեանքը՝ Նոր Երեւանցիք: — Ժողովրդի մնացած մասն էլ թէ Ղարեան և թէ Ղլջմիածին՝ 1807 թուին գնացին ի Տփլիս, երբոր Գղովիչ կուսակալը եկաւ Երեւանայ վերայ:

Եվրեմ Աթուղիկոսը 1810, երբ որ Հայրապետական Աթոռը նստաւ, Աթոռոյ միաբանք և Աղաբաշապատայ բնակիչքն էլ հետզհետէ վերս դարձան, և մինչև 1816 Փրկչական թիւը գրեթէ Աղաբաշապատայ ամառի տունները բնակչով լցուել էին, յորոց շատ փոքր մնացին ի Տփլիս և կարան անդ հաստատուն բնակութիւն, որք և արդ ունին առանձին Եկեղեցի ի Հալուարար յարուարձանի քաղաքին, կոչեցեալ և արդ իսկ Լջմիածնեցոց Եկեղեցի:


Ուստայ Պարսից հետ ունեցած վերջին պատերազմին յամի 1827, Երեւանայ Հիւսէին խան Սարտարի հրամանաւ Աղաբաշապատցիք ևս երկրի բնակչաց հետ դաղթեցին մեծամեծ վնասով ի Պայազիտ Տաճկաց սահմանը,

որոնք վերստին դարձան յիւրաքանչիւր զիւրս ի նոյն ամի, երբ որ այս տէրութիւնը անրապետաց Արարատեան նահանգի Արեւանայ երկրի գաւառներին:

Ազգուց էր որ Ազղարշապատցիք կցանկային իրանց հարիւրամեան հին ու փայտայարկ եկեղեցին: նորոգել, բայց իրանց աշխարհային կառավարութիւնը ձեռնտու չէր լինիլ նոցա. բայց ինչպէս առաքինի մարդիկ բարի գործոց յիշատակ աշխարհքի վրա անմահացնելու պակաս չեն, նոյնպէս և Ազղարշապատայ բնակիչներէն առաքինի և աստուածասէր անձինք պակաս չեղան յիշատակ բարի և աստուածահաճոյ գործ անմահացնելու:

Յովհաննէս Շափթուեանց անձն առաքինի և բարեպաշտօն երկար ժամանակ Ազղարշապատայ եկեղեցւոյն ժողովրդոց երկցփոխանը լինելով, նոցա հոգեւոր արոց և խաչահամբուրից լումայն ամեցնելու հոգ տարաւ. որով և Ակեղեցւոյ արեւելեան կողմը զիւղական դպրոցը կառուցանելով, իր անմահ հոգւոյն և բարի գործոցը յիշատակ թողուց:

Սորանից բարի օրինակ առան ջերմեռանդ անձինք, որք եկեղեցւոյ մայր դումարը հասցնելով մինչև եօթը հազար մանէթ արծաթ դրամ, որոյ վերայ առաքինասէր և եռանդուն Գրիգոր Տէր-Մկրտչեան Մալենցեանց իւր սեփհական արդիւնքէն ևս երեք հազար մանէթ ընծայելով և յաւելլով, ժողովրդոց ըստ կարի նու իրանաց հետ, յամին 1860, հիմն ձգեցաւ քարուկիր շինութեամբ նոր ու հոյակապ Ակեղեցւոյ հին եկեղեցւոյ տեղը մեծագոյն քան զայն՝ վեց սեան վերայ՝ հրամանաւ Հոգեւոր Աշխատութեանն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0241703

